

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

»ԴժՎԱՐ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԻՆՉՊԻՍԻ՞ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԻՆՉՊԻՍԻ՞ ԱՊԱԳԱ« ԹԵՄԱՅՈՎ ԵՐԵՎԱՆ, ՍԵՍՏԵՄԲԵՐԻ 25-Ն, 2003Ք.

Ընտանիքը և երեխան հայ հասարակության հիմնասյուններից են, հասարակություն, որը դիմակայել է անսպասելի շրջադարձերով լի պատմության դաժան վայրիվերումներին՝ իր մշակույթի, համախմբվածության և անսասան համերաշխության շնորհիվ:

Այսօր, անկախության հռչակումից տասներկու տարի անց, Հայաստանը դեռ շարունակում է դիմակայել դժվարին տնտեսական իրավիճակին, ինչն առաջ է բերում ավելի ու ավելի շատ ընտանիքների աղքատացում և խոցելիություն: Նման ընտանիքների մի մասն այլևս ի վիճակի չէ իրականացնել երեխաների պաշտպանությունը և դաստիարակությունը: Այդ երեխաները տեղավորվում են հաստատություններում (մոտ հիսուն հաստատություններում տեղավորված երեխաների թիվը հասնում է 11 հազարի) կամ, որպես նոր երևույթ, թափառում փողոցում՝ գոյատևելով պատահական վաստակներով կամ մուրացկանությամբ:

Հայրուրավոր այսպիսի երեխաներ, իրենց ընտանիքներում տիրող սոցիալական թշվառ պայմանների արդյունքում հայտնվելով վտանգի մեջ, հանդիման, շատ հաճախ նույնացվում են վտանգավոր երեխաների հետ: Փողոցային ստուգայցերից հետո նրանց տեղավորում են պետական հաստատություններում, որոնք չունեն երեխաների պաշտպանության, կրթության և հասարակության մեջ նրանց վերաինտեգրացման համար անհրաժեշտ միջոցներ:

1997 թ. »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպությունը Վարդաշենի ՀՀԿՀ-ում հանդիպեց երեխաների, որոնց առօրյան բռնությունների և նվաստացումների մի շարան էր, որտեղ նրանք հաճախ զրկված էին ընտանիքի հետ ցանկացած կապից: Այսպիսի երեխաներին որպես հանցագործ դիտելը հակասում էր Միավորված ազգերի կազմակերպության երեխաների իրավունքների վերաբերյալ կոնվենցիային, որը Հայաստանի Ազգային ժողովը վավերացրել էր 1993 թ.: Կոնվենցիայում բազմիցս փաստվում է, որ երեխայի դաստիարակության պատասխանատվությունը ընկած է նրա ընտանիքի վրա, որ պետությունը պետք է պաշտպանի ծնողների իրավունքները, աջակցի նյութական դժվարություններ ունեցող ընտանիքներին՝ երեխաների հանդեպ իրենց պարտականությունները կատարելու նպատակով (սնունդ, առողջություն, կրթություն...):

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության միջամտության և հաստատության դաստիարակների հետ իրականացված աշխատանքի արդյունքում, Վարդաշենի ՀՀԿՀ-ում իրավիճակը զգալիորեն բարելավվել է: 2003 թ. հաստատությունը այլևս նման չէ 1997 թ. հաստատությանը:

2000թ. »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպությունը ծավալեց սոցիալական կանխարգելման մի ծրագիր, որի նպատակն է

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

աջակցել ինչպես փողոցում, այնպես էլ ընտանիքներում ապրող դժվար իրավիճակում գտնվող երեխաներին:

Վեցամյա ներկայությունը աշխատանքի այս երեք ճակատներում՝ ընտանիք, փողոց, հաստատություն, »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպությանը իրավունք է վերապահել հավաստելու, որ սոցիալապես օտարված երեխաները վտանգի մեջ են և ոչ թե վտանգավոր: Նրանք աջակցության և պաշտպանության կարիք ունեն: Չմայած այն բանին, որ համապատասխան նախարարությունների թե մոտեցումներում և թե խոսքում որոշակի առաջընթաց է նկատվում, ներկայումս գործող պաշտպանության համակարգը լիովին հարմարեցված չէ: Այն նման կարգի երեխաներին դիտում է որպես »սոցիալապես վտանգավոր«: Ազգային համերաշխությունից բխող լուծումներ առաջարկելու փոխարեն այդ համակարգը դատապարտում է ծայրահեղ աղքատությունը:

Հրապարակային բանավեճ ծավալելով դժվար իրավիճակում գտնվող երեխաների ապագայի վերաբերյալ՝ »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպությունը նպատակ ունի.

- Ցույց տալ այդ երեխաների իրական դեմքը, պատռել լռության քողը և բացահայտել այն հաստատությունների գործունեության անկատարությունը, որոնց առաքելությունն է երեխաների պաշտպանությունը:
- Ցույց տալ, որ գոյություն ունեն այդպիսի երեխաների պաշտպանության և դաստիարակության այլընտրանքային եղանակներ, որոնց շնորհիվ նրանք կունենան ապահով ապագա հայ հասարակության մեջ:

Հենվելով սեփական փորձի վրա »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության աշխատախմբերը ցանկանում են իշխանություններին և հաստատություններին դաստիարակչական թիմերին ցույց տալ, որ գոյություն ունեն նաև այլ լուծումներ: »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպությունը նպատակ է հետապնդում դրդել շահագրգիռ անձանց՝ անհրաժեշտ աջակցություն գտնելու օրենսդիր մարմինների և միջազգային կառույցների կողմից (հիմնադրամներ, աշխատակիցների վերապատրաստում), ինչը թույլ կտա փոխել գործող այդ համակարգը:

Խոսքը գնում է կառուցողական գործողությունների մասին, որոնց նպատակը պետք է լինի համախմբել շահագրգիռ անձանց՝ դժվար իրավիճակում գտնվող երեխաներին հետագայում արդյունավետ կերպով պաշտպանության նկատառումներով:

1. ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

«Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա» թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

Երեխայի իրավունքների կոնվենցիայի նախաբան, ընդունված և բաց՝ միանալու նպատակով, վավերացումը և անդամակցությունը ըստ ընդհանուր Ասամբլեայի 1998 թ. նոյեմբերի 20-ի 44/25 որոշման: Օրենքի ուժ է ստացել 1990 թ. սեպտեմբերի 2-ին, ըստ 49 հոդվածի: Հայաստանի Ազգային ժողովի կողմից վավերացվել է 1993 թ. հունիսի 23-ին, Հայաստանում օրենքի ուժ է ստացել 1993 թ. հուլիսի 22-ին:

Հանդուլված լինելով, որ ընտանիքին՝ որպես հասարակության հիմնարար խմբային միավորի, և նրա բոլոր անդամների, և հատկապես երեխաների աճի ու բարեկեցության բնական միջավայրի, պետք է ցուցաբերվի անհրաժեշտ պաշտպանություն և աջակցություն, որպեսզի կարողանա լիարժեք կերպով ստանձնել իր պարտականությունները հասարակության շրջանակներում

Շանաչելով, որ երեխան իր անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության, սիրո և ընբռնման մթնոլորտում

Ընդունելով, որ աշխարհի բոլոր երկրներում կան բացառիկ ծանր պայմաններում ապրող երեխաներ և այդ երեխաները կարիք ունեն հատուկ ուշադրության:

ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին Կոնվենցիա, հոդված 3

[...] 1. Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանի, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին:

2. Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական համապատասխան միջոցները:

Ա. ԾԱՅՐԱՅԵՂ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆ Է

«Ապրելը դարձել է զանցանք: Հայաստանում նման ընտանիքում ապրելը դարձել է զանցանք»:

Ծրագրում ընդգրկված մի երեխա

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

ստանալու համար անհրաժեշտ է ունենալ գրանցում բնակության վայրում:¹ Մինչդեռ այս ընտանիքների մեծամասնությունը ապրում է ժամանակավոր կացարաններում, առանց հասցեի (նկուղներ, խարխուլված շինություններ, վագոններ, գերեզմանատներ) կամ էլ օրավարձով են տուն վերցնում, իսկ տանտերերը հրաժարվում են վարձակալության վերաբերյալ որևէ փաստաթղթեր տրամադրել:

Առանց վարչական հաշվառման ընտանիքները չեն կարող ակնկալել որևէ տեսակի նպաստ («Փարոս», հաշմանդանություն և այլն), օրինական ճանապարհով աշխատանք, պոլիկլինիկայում բուժօգնություն, երեխաներին դպրոց ընդունել, մասնակցել ընտրությունների...

Քաղաքացու և անձի ցանկացած իրավունք բացառող այսպիսի իրավիճակը կարող է կործանարար և խիստ վտանգավոր հետևանքներ ունենալ երեխաների համար:

2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ ԱՊԱԿԱՅՈՒՆԱՑՈՒՄ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

Այսպես, »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության ծառայություններից օգտվող ընտանիքների սուկ 55%-ն է նպաստ ստանում, մինչդեռ ելնելով իրավիճակից, նրանց բոլորին էլ նպաստ պետք է հատկացվեր: Բացի դրանից, այդ հատկացումները անբավարար են, նույնիսկ եթե գումարվում են չնչին աշխատավարձին: Տեղեկանքի կարգով նշենք, որ հինգից վեց անձից կազմված ընտանիքը ամսեկան 15 հազար դրամ ծախսում է միայն հացի պահանջը բավարարելու համար (սև հացի 1 կիլոգրամն արժի 500 դրամ): Նպաստի առավելագույն չափը, որին կարող է հավակնել այսպիսի կազմ ունեցող ընտանիքը, ամսեկան կարող է կազմել առավելագույնը 10000 դրամ:

»Կանխարգելում« ծրագրում ընդգրկված ընտանիքների մոտ 50%-ում ծնողներից գոնե մեկն աշխատում է: Սակայն Հայաստանում աշխատավարձերն այնքան ցածր են, որ աղքատ ընտանիքը առանց բարեկամներից, մասնավորապես սփյուռքից աջակցության և սոցիալական հատկացումների, երբեք չի կարող թշվառությունից դուրս գալ:

Ծնողների աշխատավարձերը տատանվում են 5-10 հազար դրամի սահմաններում, այն դեպքում, երբ ամենահամեստ բնակարանի մեկ ամսվա վարձը 10 հազար դրամ է, փոխադրամիջոցների ուղեվարձերը բարձր են, երեխաներին սնունդ, հագուստ, խնամք է անհրաժեշտ, նրանք պետք է դպրոց կամ մանկապարտեզ հաճախեն...

3. ՏՐԱՎՄԱՆԵՐ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐ

Այս ընտանիքներում երեխաների և ծնողների ուսերին ծանրանում են նաև անձնական և ընտանեկան բնույթի տրավմաներ. հարազատի մահը, կոնֆլիկտներ և բռնություններ, տնտեսական ծայրահեղ անկայունություն: Սրանք բոլորը հոգեկան ծանր տառապանքների

¹ Ըստ Հայաստանի կառավարության 1998 թ. դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշման 29 և 21 հոդվածների

«Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպություն, Հայաստան գիտաժողով «Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա» թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

պատճառ են: Երեխաները և ծնողները հաճախ խորը տագնապ, ճնշող ճգնաժամային իրավիճակներ են ապրում, կորցնում են վստահությունը սեփական ուժերի նկատմամբ:

4. ՓՈՂՈՑՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԵՐԵՒԱՆԵՐ

«Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության ծրագրում ընդգրկված երեխաների մեծամասնությունը ունի միայնակ և բազմազավակ մայրեր: Հայրերը մահացել են կամ բացակայում են, երբեմն արտասահմանում են՝ այնտեղ աշխատանք գտնելու նպատակով: Այսպիսի իրավիճակում մայրերից ոմանք այլ ելք չեն գտնում, քան երեխաներին մուրալու ուղարկելը:

Օտարման գործընթացի վերջնակետին երեխաները հաճախ հայտնվում են փողոցում և զբաղվում մուրացկանությամբ: Երևանում մի քանի տասնյակ երեխա մուրում են կամ փողոցում աշխատում են, որոնցից մոտ 20-ը՝ կանոնավոր կերպով: Սակայն Հայաստանի մայրաքաղաքում «փողոցի երեխաներ» չկան: Չկան այնպիսիք, որոնք փողոցում աշխատեին և քնեին կանոնավոր կերպով, կազմելով այս կամ այն չափով կազմակերպված խմբավորման մաս:² Երեխաները երբեմն մի քանի գիշեր անցկացնում են զբոսայգիներում կամ փողոցում, քանի որ փախել են տնից կամ վռնդվել են հայրական օջախից: Իսկ երբ ընտանիքը վտարվում է կացարանից, ընտանիքի բոլոր անդամները քնում են բաց երկնքի տակ:

Գոյություն ունեն, սակայն փողոցում հայտնված երեխաներ, այսինքն, մշտապես կամ ժամանակ առ ժամանակ մուրացկանությամբ զբաղվող երեխաներ, որոնք երեկոյան տուն են վերադառնում: Խնդիրն այստեղ ավելի շուտ ոչ այնքան «փողոցում հայտնված երեխաներն» են, այլ հասարակությունից օտարված նրանց ծնողները, որոնք իրենց մեղքի գիտակցությամբ, անհարմար զգալով և մի կերպ համակերպվելով, իրենց երեխաների հետ մուրում են փողոցներում մի քանի ժամ օրական կամ շաբաթական՝ ընտանեկան օջախի գոյությունն ապահովելու, սնունդ գնելու, կացարանի, ջեռուցման վարձերը մուծելու, իսկ հաճախ նաև ... երեխայի դպրոցական ծախսերը հոգալու նպատակով: Շատ դեպքերում օգնության և արտասահմանում բարեկամների բացակայության պայմաններում, նրանք այլընտրանք չեն տեսնում:

Դժբախտաբար, Հայաստանի օրենքները հաշվի չեն առնում այս իրողությունները և խստորեն դատապարտում են ծնողներին, որոնց երեխաները զբաղվում են մուրացկանությամբ: Այսպես, Հայաստանի քրեական օրենսգրքի 166.1 և 166.2 հոդվածներով իրենց երեխաներին մուրացկանության դրդող ծնողների համար նախատեսված է մի քանի տարով ազատազրկում: Մյուս կողմից էլ, չենք կարող անվերապահորեն պնդել, որ երեխաների համար ամենավտանգավորը փողոցն է: Ամեն դեպքում հենց փողոցն է, որ ընտանիքին տալիս է սննդի և հագուստի

² «Փողոցի» «փողոցում» տարբերակումը մշակվել է Grand Bassam-ի հասարակական կազմակերպությունների հավաքի ընթացքում (Կոտ-Դիվուար, 1985թ.) և միազգային տարածում է ստացել:

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

համար անհրաժեշտ նվազագույնը, որն այլ կերպ հայթայթելն անհնար էր: Հայաստանում փողոցային բռնությունների ցածր մակարդակը, ինչպես նաև այն փաստը, որ երեխաների մեծամասնությունը մուրացկանությունից զբաղվում են իրենց հայրերի կամ մայրերի հետ, սահմանափակում են երեխային սպառնացող վտանգների շրջանակը: Նվազում է նաև որոշակի համակարգված խմբավորումներում ընդգրկված լինելու վտանգը կամ էլ հասարակության մեջ ընդգրկվելու այլ արատավոր եղանակների հնարավորությունը, ինչը նկատվում է այլ երկրներում, մասնավորապես նախկին ԽՍՀՄ-ի տարածքում:

5. ԱՏՈՒԳԱՅՑԵՐ ԵՎ ՈՉ ԱՐԴԱՐԱՑԻ ՏԵՂԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Դեռևս խիստ պարբերաբար իրականացվող ոստիկանական ստուգայցերի արդյունքում երեխաները սովորաբար տեղավորվում են պետական երկու հաստատություններից մեկում՝ Վարդաշենում կամ Նուբարաշենում: Երեխաները հայտնվում են միայն »սոցիալապես վտանգավոր երեխաներ«-ի, այսինքն՝ իրավախախտ երեխաների համար նախատեսված հաստատություններում, իրենց ընտանիքներից հեռու:

Այս եղանակով չափից դուրս շատ երեխաներ են ստուգայցերի արդյունքում տեղավորվում հաստատություններում, մինչդեռ երեխաներին ընդունելու վերջիններիս հնարավորությունները, միջոցները և աշխատակիցները ի վիճակի չեն հավուր պատշաճի ապահովել երեխաների պաշտպանությունը և դաստիարակությունը: Այսպիսով երեխաների ապագան մշուշվում է բռնության և թշվառության արատավոր ստվերում:

Բ. ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԶՅԿՅ-ՆԵՐՈՒՄ

Վարդաշենի հանրապետական հատուկ կրթահամալիրը (ԶՅԿՅ) պետական հաստատություն է՝ Կրթության և Գիտության նախարարության ենթակայության տակ: Գտնվում է Երևանի արվարձաններից մեկում՝ Էրեբունի համայնքում: Նախկինում գաղութ հիշեցնող հաստատությունը 1996 թ.-ին դարձավ բաց և մշտապես ներառում է 75-ից 95 երեխա: Տեղավորված երեխաների մեծամասնությունը դպրոց չի հաճախել, բռնվել են ստուգայցերի արդյունքում՝ թափառաշրջիկություն կամ մուրացկանություն անելիս: Հաստատությունում աշխատում է 70 մարդ:

1997 թ.-ից ի վեր »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության աշխատախումբը ջանքեր է գործադրում աջակցելու հաստատության աշխատակիցներին՝ իրենց գործունեության ընթացքում դաստիարակչական և զվարճալի միջոցառումներ կազմակերպելու, բժշկական և հոգեբանական անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու,

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով «Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա» թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

ընտանիքների հետ կապի պահպանման և ամրապնդման, հասարակության մեջ վերաինտեգրացման գործում:³

Ամեն դեպքում նշենք, որ «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպությունը իրավասություններ չունի ազդելու ոչ Կրթության նախարարության ենթակայության տակ գտնվող հաստատության աշխատակազմի, ոչ էլ ՀՀԿՀ-ի տնօրինության՝ երեխաների կյանքի պայմաններին վերաբերող որոշումների վրա: Նրա դերը սահմանափակվում է սոսկ բժշկական, հոգեբանական, կրթական և նյութական աջակցության ցուցաբերումով, ինչպես նաև հաստատության աշխատակազմին խորհրդի կարգով աջակցելով, հարկ եղած դեպքում՝ ճնշում գործադրելով և վկայություններ տալով:

1. 1997թ. ՎԱՐԴԱՇԵՆ, ԲՈՆՈՒԹՅԱՆ «ՌԵԺԻՍ»

1997 թ.-ին, երբ «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության աշխատախմբերն սկսեցին իրենց գործունեությունը Վարդաշենի ՀՀԿՀ-ում, նրանք բացահայտեցին սարսափելի մի իրավիճակ: Ստուգայցերից հետո ոստիկանությունը երեխաներին միանգամից բերում էր հաստատություն, բացառելով ցանկացած միջամտություն, հաճախ նույնիսկ տեղյակ չպահելով ծնողներին:

Շահերով և ցանկապատով անջրպետված այս հաստատությունում երեխաներն, հասարակության մնացած մասի կողմից մոռացության մատնված, ապրում էին նյութական, հոգեկան և դաստիարակչական տեսանկյունից սոսկալի պայմաններում:

Ունենալով «օրինազանց» և «վարքային շեղում» ունեցող երեխաների համբավ, որոնց հարկ էր պատժել կամ վերադաստիարակել, նրանք կրում էին «ռեժիմի» բռնատիրական ճնշումը, ամբողջատիրական մի համակարգի, որը գործարկող հսկիչները վախի և նվաստացման մթնոլորտում երեխաներին պարտադրում էին գրեթե գաղութային կարգապահություն:

Չունենալով դաստիարակչական մոտեցումների վրա հիմնված ներքին կանոնակարգ՝ ինչը հնարավոր կդարձներ կոնֆլիկտների կարգավորումը՝ «ռեժիմի» կողմից իրականացվող բռնությունը, կարգավորման միակ, ընդունված, պարբերաբար կիրառվող եղանակն էր դարձել հաստատությունում:

Առօրյայում այն արտահայտվում էր երեխաների նկատմամբ կամայական և դաժան վերաբերմունքով:

Երեխայի կապը ընտանիքի հետ խզված էր: Ընտանիքի հետ տեսնվելու համար երեխաները կրկնապատկում էին փախուստները, որոնք հաստատությունում դիտվում էին որպես զանցանք, այսինքն՝ հավասարեցվում էին հաստատությունից դուրս կատարված օրինախախտումներին և պատժվում «ռեժիմի» տրամաբանությամբ:

³ Հավելյալ տեղեկություններ ստանալու նպատակով տե՛ս «Դժվար իրավիճակում գտնվող երեխաներ» ծրագիր – Հաշվետվություն 2002 թ. գործունեության վերաբերյալ - «ԲԱՍ» Ֆրանսիա կազմակերպություն - Առաքելություն Հայաստանում՝ տրամադրվում է կազմակերպությունում

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

համահունչ, այսինքն՝ բռնությամբ: Երեխաները փախչում էին, որովհետև նրանց փակի տակ էին պահում, ենթարկում բռնությունների: Երբ նրանց գտնում և վերադարձնում էին հաստատություն, կրկին փակի տակ էին պահում և ենթարկում բռնությունների, այս անգամ արդեն փախուստի համար: Դժոխային այս շրջանը, որտեղ հաստատության աշխատակազմը փախուստների սևեռուն գաղափարով էր առաջնորդվում, «ռեժիմի» կողմից հաստատությունում իրականացվող կարգավորիչ համակարգի միակ բաղկացուցիչ էր: Նա մարմնավորում էր համակարգի ամբողջատիրական բնույթը:

Ռեժիմային շրջանում փախուստների ավելի քան 70%-ի նպատակակետը ընտանիքն էր: 2002 թ. դրանց թիվը հասավ 80%-ի: Փախուստը միշտ էլ եղել է երեխայի խորին տագնապի արտահայտությունը, երեխա, որը գտնվում է ընտանիքից հեռու, իր կարիքներին չհամապատասխանող հաստատությունում:

Կամայական տեղավորումները, ընտանիքի հետ կապի դադարեցումը, հաստատությունում իրականացվող բռնությունները, անմարդկային կամ նվաստացնող կարգապահական նորմերն ու վարվելաձևերը, սեռական շահագործումը, խնամքից և հատուկ պաշտպանությունից, զվարճալի միջոցառումներից զրկելը՝ ՄԱԿ-ի երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով երեխաների իրավունքների ոտնահարման և բռնության այս բոլոր դեպքերը Վարդաշենի երեխաների առօրյան էին կազմում:

Երեխաների և «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության ներքոհիշյալ վկայությունները լուսաբանում են իրողությունների ծավալն ու բազմազանությունը: Հաճախ կրկնվող և համանման այս պատմությունները, դաջված լինելով վկայություն տված անձանց հիշողության մեջ, բացահայտում են «ռեժիմային» Վարդաշենի ողջ սարսափը:

• Կամայական տեղավորում

»Ծնողներից շատերը նույնիսկ չգիտեին էլ, թե որտեղ են իրենց երեխաները: Նախկինում ոստիկանությունը ստուգայցեր էր կազմակերպում և երեխաներին անմիջապես տանում Վարդաշեն: Փոքրերին տեղափոխում էին Նուբարաշեն, իսկ մեծերին՝ Վարդաշենում: Նշենք որ երեխաների տեղավորումը իրականացվում էր առանց անձնական գործերի, առանց համապատասխան անձը հաստատող փաստաթղթերի: Երբ մենք սկսեցինք մեր աշխատանքները, առաջին հերթին կազմեցինք երեխաների ճշգրիտ ցուցակը: Մենք ծնողներին տեղեկացրինք, որ իրենց երեխաները Վարդաշենում են և որ նրանց կարելի է այցելել: Մենք հեշտացրինք այդ այցերը՝ վճարելով ծնողների փոխադրամիջոցների ծախսերը:«
»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության աշխատակից

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

ՄԱԿ-ի երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, հոդված 18

1. (...) Ծնողները կամ համապատասխան դեպքերում օրինական խնամակալները երեխայի դաստիարակության ու զարգացման համար կրում են հիմնական պատասխանատվություն: Երեխայի լավագույն շահերը նրանց հիմնական հոգածության առարկան են:

2. Սույն կոնվենցիայում շարադրված իրավունքները երաշխավորելու և դրանց իրականացմանը նպաստելու նպատակով մասնակից պետությունները ծնողներին և օրինական խնամակալներին անհրաժեշտ օգնություն են տրամադրում երեխայի դաստիարակության իրենց պարտականությունները կատարելու գործում և ապահովում են երեխայի խնամքի հաստատությունների և ծառայությունների զարգացումը:

3. Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի ապահովվի աշխատող ծնողների երեխաների իրավունքը՝ օգտվելու նրբանց համար նախատեսված երեխաների խնամքի ծառայություններից:

ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա, հոդված 27.3

Մասնակից պետությունները, ազգային պայմաններին համապատասխան և իրենց հնարավորությունների շրջանակներում, անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում այդ իրավունքի իրականացման գործում ծնողներին և երեխայի համար պատասխանատու այլ անձանց աջակցելու համար նյութական աջակցություն ու օժանդակող ծրագրեր, մասնավորապես, կապված սննդի, հագուստի և բնակարանով ապահովելու հետ:

• Ընտանիքի հետ կապի բռնի ընդհատում

»Երեխայի՝ հաստատություն մուտք գործելու առաջին իսկ օրվանից նա ճնշումների էր ենթարկվում: Արվում էր ամեն ինչ, որպեսզի երեխան դադարի իրեն անհատականություն զգալուց: Երեխային արգելում էին հանդիպել իր ծնողներին, երբ վերջիններս նրան այցի էին գալիս Վարդաշեն: Դա անընդունելի էր: Դրանից հետո արդեն երեխան պատրաստ էր ամեն ինչի«:

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության աշխատակից

»Ես կարծում եմ, որ ռեժիմի վերացումը շատ բարենպաստ էր ընտանիքների հետ կապի սահմանման գործում: Սկզբում, երբ մենք սկսում էինք մեր աշխատանքը, երեխաների այցերը տուն բացառվում էին, իսկ հաստատություն այցելող ծնողների թիվը շատ փոքր էր: Բացի այդ, հաստատություն այցելող ծնողներին մեծ դժվարությամբ էր հաջողվում տեսակցել իրենց երեխաներին«:

«Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպություն, Հայաստան գիտաժողով «Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա» թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

«Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության աշխատակից

»Ես հիշում եմ Ե-ի դեպքը: Մահացել էր նրա եղբայրը: Նա գետնում խեղդվել էր: Տատը եկել էր Ե-ին տուն տանելու՝ եղբորը հրաժեշտ տալու: Հաստատությունում նրան չհավատացին և թույլ չտվեցին տուն գնալ: Այդ ժամանակ Ե-ն դիմեց փախուստի, սակայն եղբոր հուղարկավորությունն արդեն ավարտվել էր«:

«Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության աշխատակից

ՄԱԿ-ի երեխաների իրավունքների մասին կոնվենցիա, հոդված 9

1. Սասնակից պետություններն ապահովում են, որ երեխան, հակառակ ծնողների ցանկության, չբաժանվի նրանցից, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմինները գործող օրենքի և ընթացակարգի համաձայն կայացնեն որոշում, ինչը ենթակա է դատական վերահսկողության, որ այդպիսի բաժանումն անհրաժեշտ է երեխայի շահերը լավագույնս պաշտպանելու տեսակետից: Նման որոշում կարող է անհրաժեշտ լինել այս կամ այն կոնկրետ դեպքում, օրինակ, երբ ծնողները դաժանորեն են վարվում երեխայի հետ կամ հոգ չեն տանում նրա մասին, կամ երբ ծնողներն առանձին են ապրում և հարկ է որոշում կայացնել երեխայի բնակության վայրի վերաբերյալ:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն ցանկացած քննության ընթացքում բոլոր շահագրգիռ կողմերին հնարավորություն է տրվում մասնակցել քննությանը և ներկայացնել իրենց տեսակետները:

3. Սասնակից պետությունները հարգում են ծնողներից մեկից կամ երկուսից բաժանված երեխայի իրավունքները՝ կանոնավոր կերպով անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր պահպանելու ծնողների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հակասում է երեխայի լավագույն շահերին:

• Բռնությունը հաստատությունում

»Եթե իրավիճակը համեմատեմ բանտի հետ, կարող եմ ասել, որ այնտեղ բանտից էլ վատ էր: Ռեժիմի դեկավարը չափազանց դաժան էր երեխաների հանդեպ: Ես կարծում եմ, որ մինչ այդ նա աշխատել էր հոգեբուժարանում որպես հսկիչ: Երբ նա երեխաներին ծեծում էր, դրանից ակներև հաճույք էր ստանում: Օրինակ, երեխաներին կախում էին ոտքերից գլխիվայր և ծեծում մահակներով: Կամ էլ բռնելով երկու երեխաների գլուխները, ուժով խփում էին իրար: Նա անդադար նոր հնարներ էր հորինում երեխաներին նվաստացնելու համար: Նման պատիժները հաճախ երեխաներին դրդում էին փախուստի: Սակայն «ռեժիմի» անդամները հենց

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

իրենք էին կազմակերպում փախուստները՝ ստիպելով որոշ երեխաների դրսում գողություն անել և գողոնը իրենց տալ: Երեխան կարող էր հաստատությունից դուրս գալ մի պայմանով միայն, դրսից ինչ-որ բան բերել: Իսկ եթե երեխան ցանկանում էր դրսում զբոսնել, դա դառնում էր մի ամբողջ պատմություն և արգելվում էր: Սակայն երբ ինչ-որ բան էին բերում՝ կամ գողացած, կամ իրենը, այդ դեպքում նա կարող էր դուրս գալ ցանկացած պահի:»

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության աշխատակից

»Վարդաշենի պատասխանատուներից մեկը երեխաներին ուղարկում էր գողություն անելու: «Եթե ուզում եք հաստատությունից դուրս գալ, ապա օգնեք ինձ: Ինձ այս է պետք, այն է պետք»: Նրան նույնիսկ չէր հետաքրքրում, թե մենք որտեղից պիտի ծարեինք այդ փողը: Նա մեզնից պահանջում էր փող բերել: Եվ այսպես մենք սկսեցինք դուրս գալ, երբ ուզում էինք, քանի որ ոչ մեկը չկար, որ մեզ հսկեր, քանի որ նա մեզ թույլ էր տալիս դուրս գալ: Իսկ եթե մենք փող չէինք տալիս, նա բարկանում էր և նորից սկսում էր մեզ ծեծել:»

Վարդաշենի նախկին սան

»Երեխայի՝ հաստատություն մուտք գործելու առաջին օրից նրա վրա ճնշումներ էին գործադրում և անում ամեն ինչ, որպեսզի երեխան դադարի իրեն անհատականություն զգալուց: Օրինակ, թույլ չէին տալիս գնալ և հոգալ բնական պետքերը:»

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության աշխատակից

»Հաճախ նորեկներին երեկոյան տանում էին լողասենյակ իբր լվացվելու և այնտեղ սկսում էին ծեծել: Մեզ, օրինակի համար, հարցնում էին. «Ձեզ ինչի՞ համար են այստեղ բերել»: Ես պատասխանում էի. «Գողության մեղադրանքով»: Այդ ժամանակ նրանք ասում էին. «Ահ, ուրեմն դու գո՞ղ ես»: Եվ ծեծը սկսվում էր:»

Վարդաշենի նախկին սան

»Դասամիջոցին մի հսկիչ քաշեց մազերիցս և գլուխս խփեց պատին: Նա ինձ ասաց. «Գնա զուգարան ու կտեսնես»: Նա բռունցքով հարվածեց գլխիս աջ կողմին և ականջիս ասաց. «Քեզ կարգին պահիր»: Հետո նա հայիոյեց և հրամայեց անկյուն կանգնել:»

Վարդաշենի նախկին սան

Ըստ Նախարարությունների անհրաժեշտ էր այս երեխաներին ամեն գնով մեկուսացնել հասարակությունից: մնացածն արդեն դաստիարակների և մասնագետների գործն էր: Մեկուսացնել, ահա թե ինչն էր առաջնայինը: Ավելի շատ գումար ծախսվում էր վանդակաճաղերի վրա, քան թե երեխաների դաստիարակության:»

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության աշխատակից

»Ինչքան երեխաների թիվը մեծ էր, այնքան մեծ էին նրանց ֆինանսական հնարավորությունները և օգնությունները: Այդ պատճառով էլ ցանկանում էին ավելացնել երեխաների թիվը: Նրանք դիմում էին մի

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

կազմակերպության սնունդ հատկացնելու խնդրանքով, այնուհետև ստացված սնունդը վերավաճառվում էր: Ստանում էին հագուստ և կրկին վերավաճառում»:

Վարդաշենի նախկին սան

Հոդված 19

1. Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցներ պաշտպանելու երեխային ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձանց կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ՝ սեռական չարաշահումը:

2. Պաշտպանության այդպիսի միջոցներն անհրաժեշտության դեպքում ներառում են սոցիալական ծրագրերի մշակման արդյունավետ ընթացակարգեր՝ նպատակ ունենալով անհրաժեշտ աջակցություն տրամադրել երեխային և այլ անձանց, ովքեր հոգ են տանում նրա մասին, ինչպես նաև երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի՝ վերը նշված դեպքերը կանխարգելելու և բացահայտելու, դրանց մասին տեղեկացնելու, քննարկման հանձնելու, հետաքննելու, բուժելու, և այդ առթիվ հետագա միջոցներ ձեռնարկելու այլ ձևերի իրականացման, այդ թվում, ըստ անհրաժեշտության, դատական գործ հարուցելու համար:

ՄԱԿ-ի երեխաների իրավունքների մասին կոնվենցիա, հոդված 3.3.

Մասնակից պետություններն ապահովում են երեխայի մասին հոգալու կամ նրանց պաշտպանության համար պատասխանատու հիմնարկների, ծառայությունների և մարմինների կողմից համապատասխանությունը իրավասու մարմինների կողմից սահմանված չափանիշներին, մասնավորապես, անվտանգության և առողջապահության բնագավառներում դրանց թվաքանակի և անձնակազմի պիտանելիության, ինչպես նաև իրավասու հսկողություն սահմանելու մասին:

- Կարգապահությունը և դաժան, անմարդկային, նվաստացնող վարվելաձևերը

»Սկզբում հաստատության աշխատակիցները ռեժիմի անհրաժեշտությունը պայմանավորում էին երեխաներին հսկելու անհրաժեշտությամբ՝ փախուստները և կոնֆլիկտները բացառելու նպատակով: Սակայն մեր ուսումնասիրությունները հակառակն են

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

ապացուցում: Պատժամիջոցները չէին նվազեցնում փախուստների քանակը: Երբ երեխաներին հարցնում էին փախուստի պատճառը, նրանք պատասխանում էին, որ պատճառը ռեժիմի պատիժներն էին: Բռնություններն անթիվ էին ու անվերջ, միտված էին խոցելու երեխաների ինքնասիրությունը և արժանապատվությունը«:

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության աշխատակից

»Չկային հատուկ և հստակ սահմանված կանոններ: Մեզ բռնում էին ու ծեծում պարզ ու սովորական բաների համար: Ջարմանալի է, որ այսօր հաստատությունում մշակվել են որոշակի կանոններ, ներքին կանոնակարգ...«

Վարդաշենի նախկին սան

»Երբ հասնում էիք Վարդաշեն, նրանք մեզ տանում էին կարգեր՝ մենախուց,: Մեզ մերկացնում էին, վրաներս սառը ջուր լցնում ու ծեծում ինչով պատահի, օրինակ՝ գոտիներով: Հետո փակում էին այնտեղ 3 օր առանց ուտելիքի: Մեզ այնպես էին ծեծում, որ դրանից հետո շաբաթներ շարունակ հիվանդ պառկում էինք«:

Վարդաշենի նախկին սան

»Երեկոյան նրանք բանալիով փակում էին բոլոր դռները: Հետո մեզ արթնացնում էին և տանում կարգեր, որտեղ մեզ ծեծում էին: Հետո մեզ կանչում էին և ասում. »Որպեսզի չծեծենք ձեզ, դուք պիտի գողություն անեք և մեզ տաք ձեր գողացածը«: Մի անգամ մեզ ծեծեցին, որ ստիպեն գողություն անել: Մենք էլ խաբեցինք: Ասացինք. »Լավ, գնում ենք գողության«: Բայց փախանք ու տուն գնացինք: Հետո մեզ բռնեցին ու հարցրեցին, թե ինչու գողություն չենք արել: Մեզ այնպես ծեծեցին, որ մի ամիս հիվանդ պառկած էինք«:

Վարդաշենի նախկին սան

»Կային նաև զուգարաններ, որոնք վերափոխել, դարձրել էին կարգեր, պատժախուց: Մեզ փակում էին այնտեղ՝ փախուստից հետո, համարյա մերկ: Չնայած ցուրտ էր, բայց նրանք այնուամենայնիվ մեզ վրա սառը ջուր էին լցնում: Հետո սկսում էին ծեծել ռեզինե մահակներով: Ծեծից հետո կրկին սառը ջուր էին լցնում և թողնում այդպես մինչև առավոտ: Պատժախուցում մեզ ուտելիք չէին տալիս: Ոչ մի բան: Մեր ընկերները ճաշի ժամանակ իրենց բաժին հացը պահում էին, հետո բաժանում փոքր մասերի և խողովակի միջով փոխանցում մինչև պատժախուց: Պատահել է, որ ես այդ սենյակում մնացել եմ երկու օր, երբեմն էլ՝ չորս օր«:

Վարդաշենի նախկին սան

»Մի երեխա կար, որ միզել էր մեկ ուրիշ երեխայի վրա: Դա տարիքով մեծ երեխաների՝ ավելի փոքրերին պատժելու ձևերից մեկն էր: Նպատակը երեխային կոտրելն էր«:

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության աշխատակից

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

»Նրանք վառել էին իմ հոնքերը: Ոչ թե կրակ էին տվել, այլ լուցկու ծծումբով պատված ծայրը քսել էին հոնքերիս: Այրոցի զգացումը երկար էր տևում: Բազմաթիվ անգամներ մեզ ծեծել էին երկաթի կտորներով և մահճակալի ոտքերով«:
Վարդաշենի նախկին սան

»Երբ երեկոն իջավ, Վարդաշենի պատասխանատուներից մեկը ինձ կանչեց իր գրասենյակը: Նա ինձ հարցրեց. »Ինչու՞ էիր փախել«: Ես ասացի. »Իմ ծնողները չգիտեին, որ ես Վարդաշենում եմ, դրա համար էլ փախա«: Նա ասաց. »Եթե չես ուզում, որ քեզ ծեծեն, ինչ-որ ասեմ պիտի անես: Պետք է 500 անգամ ծնկի գաս«: Ես ասացի, որ ծնկներս ցավում են և չեմ կարող դա անել: Նա ինձ ասաց. »Տեսնու՞մ ես այս մահակը«: Ես 200 անգամ ծնկի իջա ու բարձրացա, հետո չկարողացա շարունակել: Քրտինքը վրայիցս թափվում էր, ծնկներս այնպես էին ցավում: Նա սենյակում գտնվող մի ուրիշ երեխայից ուզեց մահակը, հետո ինձ ասաց, որ կանգնեմ: Ասաց. »Տեսնու՞մ ես այս մահակը: Պիտի ծնկի գաս«: Ես ասացի, որ էլ չեմ կարող: Խնդրեցի, որ թողնի մի քիչ հանգստանամ, հետո շարունակեմ: Նա ինձ ծեծեց«:
Վարդաշենի նախկին սան

»Երբեմն, երբ ճաշարանում նստած ուտում էինք, հսկիչները կանգնում էին մեր ետևում և խփում էին գլխներիս, մեջքներիս, հարցնելով. »Ինչու՞ ես խոսում«: Մեզ պաշտոնապես չէին ասում, որ խոսելու իրավունք չունենք, բայց հենց որ մի բան էինք ասում, գալիս ու խփում էին: Նույնիսկ եթե ոչ մի բան չէինք անում, նրանք մեզ վրա բղավելու առիթ էին փնտրում: Եթե նրանց անունը ճիշտ չէինք ասում, ծեծում էին և այդ օրը ուտելիքից զրկում: Հիմա ես ստամոքսի հիվանդություն ունեմ, որովհետև ուտելու բան չէին տալիս: Երբեմն ես կարցերում մի քանի օր էի անցկացնում«:
Վարդաշենի նախկին սան

Հոդված 28.2. ՄԱԿ-ի երեխաների իրավունքի մասին կոնվենցիա

Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները երաշխավորելու համար, որ դպրոցական կարգապահությունն իրականացվում է երեխայի մարդկային արժանապատվության հետ համատեղելի մեթոդներով և սույն կոնվենցիային համապատասխան:

Հոդված 37. ՄԱԿ-ի երեխաների իրավունքների մասին կոնվենցիա

Մասնակից պետությունները ապահովում են, որ ոչ մի երեխա չենթարկվի խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

- Սեռական բռնություններ

»Ռեժիմի« անդամներից մեկը հանդիպումներ էր կազմակերպում մարմնավաճառությամբ զբաղվող աղջիկների և նրանց նախկին հաճախորդների միջև: Վարդաշենի շուրջը պտտվում էին շատ երիտասարդներ«:

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության աշխատակից

»Մարմնավաճառությամբ զբաղվում էին գիշերները: Տղաները գալիս էին և պատուհանից կանչում աղջիկներին: Գիշերային դաստիարակի համաձայնությամբ աղջիկները դուրս էին գալիս: Մի աղջիկ պատմեց ինձ, որ իրեն գիշերային դաստիարակն էր ստիպել զբաղվել մարմնավաճառությամբ: Գալիս էին ոչ միայն պատանիներ, այլև չափահաս տղամարդիկ: Հետո աղջիկներին տանում էին սաունաներ և բարեր«:

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության աշխատակից

»Երբ հանդիպեցինք վեներական հիվանդությամբ այդ փոքրիկ աղջկան, իմացանք, որ նա բռնաբարվել էր երկու թե երեք երիտասարդների կողմից, խմբակային, իսկ դրանից հետո ստիպված էր եղել սեռական կապի մեջ մտնել չափահաս տղամարդկանց հետ«:

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության աշխատակից

»Վարդաշենի աշխատակիցներից մեկը աղջիկներին իր սենյակն էր կանչում և ստիպում մարմնավաճառությամբ զբաղվել: Նա աղջիկներին ստիպում էր դրանով զբաղվել նաև հաստատությունից դուրս: Այդ մարդը նրանց կավատն էր«:

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության աշխատակից

»Առաջին գործը, որ ձեռնարկեցինք, վերաբերում էր սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններին (ՄՃՓՀ): Ես վախեցնում էի, որ այդ հիվանդությունները ավելի կտարածվեն: Ամիսներ էին լինում, երբ չորս նոր աղջիկ էինք ընդունում` սեռավարակներով, կային նաև հղիության դեպքեր: Մեկ տարվա ընթացքում, 1999-2000 թ.թ., ընդունեցինք սեռավարակներով 12 աղջիկ և հղիության 5 դեպք արձանագրեցինք, որոնցից երեքն ավարտվեցին արհեստական վիժումով: Աղջիկները 12-17 տարեկան էին«:

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության աշխատակից

Հոդված 34. ՄԱԿ-ի երեխայի իրավունքների մասին կոնվենցիա

Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային պաշտպանել սեռական շահագործման բոլոր ձևերից և սեռական չարաշահումներից: Այդ նպատակով մասնակից պետությունները, մասնավորապես, ներպետական, երկկողմ և բազմակողմ մակարդակներով ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի կանխարգելեն.

»Բժիշկները առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

ա) երեխային ցանկացած ապօրինի սեռական գործունեության դրդելը կամ հարկադրելը,

բ) շահագործման նպատակով երեխաներին պոռնկության մեջ կամ այլ ապօրինի սեռական պրակտիկայում օգտագործելը:

• Խնամքից և հատուկ պաշտպանությունից զրկելը

»Բժիշկները մեզնով բոլորովին չէին հետաքրքրվում: Երբ ասում էինք. «գլուխս ցավում է», նրանք պատասխանում էին. «Ահ, քունդ է տանում: Դրա համար է, որ հիվանդ ես ձևանում»: Մեքենաներ կային, որոնցով դեղորայք էին բերում: Բայց երբ դեղ էինք խնդրում, օրինակ գլխացավի դեմ, նրանք ասում էին. «Քեզ տալու դեղ չունենք»:

Վարդաշենի նախկին սան

»Կային հոգեբաններ, որ դրսից մեզ այցելության էին գալիս, սակայն հսկիչները արգելում էին նրանց հետ խոսել»:

Վարդաշենի նախկին սան

»Բոլոր երեխաներն անխտիր անկումային տրամադրության մեջ էին, շատ դժվար էր նրանց հետ զրույցի բռնվելը, երբ ինձ անհրաժեշտ էր սեռավարակների մասին նրանց խորհրդատվություն տրամադրել(...)

• Խնամքից և հատուկ պաշտպանությունից զրկելը

»Բժիշկները մեզնով բոլորովին չէին հետաքրքրվում: Երբ ասում էինք. « ցավեր ունեմ », նրանք պատասխանում էին. «Ահ, քունդ է տանում: Դրա համար է, որ հիվանդ ես ձևանում»: Մեքենաներ կային, որոնցով դեղորայք էին բերում: Բայց երբ դեղ էինք խնդրում, օրինակ գլխացավի, կամ որովայնացավի դեմ նրանք ասում էին. «Քեզ տալու դեղ չունենք»:

Վարդաշենի նախկին սան

»Կային հոգեբաններ, որ դրսից մեզ այցելության էին գալիս, սակայն հսկիչները արգելում էին նրանց հետ խոսել»:

Վարդաշենի նախկին սան

*»Բոլոր երեխաներն անկումային տրամադրության մեջ էին, շատ դժվար էր նրանց հետ զրույցի բռնվելը, երբ ինձ անհրաժեշտ էր սեռավարակների մասին նրանց խորհրդատվություն տրամադրել(...)
Հաստատությունն այդ ժամանակ ուներ ընդամենը մեկ ջերմաչափ և մի քանի ցավազրկող դեղամիջոց: Երկու բուժքույրերը երեխաների խնդիրների*

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով «Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա» թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

Ուկրաինայի անուշադիր էին: Երեխաների գլուխները մաքրելու համար նրանք օգտագործում էին նավթ: Հիշում եմ երկու փոքրիկ աղջիկների, որոնց մաշկը ծակատից մինչև ծոծրակ այրվածքներով էր պատված: Լվերի դեմ բուժքույրն օգտագործում էր մի միջատասպան նյութ, այն լցնելով ուղղակի երեխաների հագուստի և անկողնու սպիտակեղենի վրա: Լուրջ հիվանդությունների դեպքում անգամ հնարավորություն չկար դիմելու մասնագետի: Երեխաները մնում էին անխնամ նույնիսկ ծանր դեպքերում: Երեխաների զննումը կատարվում էր սենյակում, ուր բացի սեղանից ու պահարանից ոչինչ չկար: Չկար առանձնացված տարածք անհատական զննման համար: Երեխային զննում էին կանգնած վիճակում, լրիվ մերկ, մինչդեռ մյուսները սպասում էին իրենց հերթին»:

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության աշխատակից

Հոդված 24. ՄԱԿ-ի երեխաների իրավունքների մասին կոնվենցիա

1. Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի՝ առողջապահության առավել կատարյալ ստանդարտներից և հիվանդությունների բուժման ու առողջության վերականգնման ծառայություններից օգտվելու իրավունքը: Մասնակից պետությունները ձգտում են ապահովել, որպեսզի ոչ մի երեխա չզրկվի առողջապահական համակարգի ծառայություններից օգտվելու իր իրավունքից:

2. Մասնակից պետությունները ձգտում են տվյալ իրավունքից լիարժեք իրականացմանը և, մասնավորապես, անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում:

Հոդված 39

Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները նպաստելու համար դաժան վերաբերմունքի, շահագործման կամ չարաշահման ցանկացած ձևի, խոշտանգումների կամ ցանկացած այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, զինված ընդհարումների զոհ դարձած երեխայի ֆիզիկական կամ հոգեբանական վերականգնումը և վերաինտեգրումը: Նման վերականգնումը և վերաինտեգրումը իրականացնում են երեխայի առողջությունն ապահովող պայմաններում:

• Բազմաբնույթ միջոցառումներից զրկելը

»Նրանք մեզ ուտելիքից զրկում էին, կամ, երբ մեր ծնողները գալիս էին, մեզ զրկում էին արձակուրդից«:

Վարդաշենի նախկին սան

»Հազվադեպ էր պատահում, որ բակ իջնեինք՝ խաղալու: Ամբողջ ժամանակ ներսում էինք«:

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

Վարդաշենի նախկին սան

»1999 թ. առաջ, ոչ մի դաստիարակչական գործունեություն չկար [...] երեխաները կարող էին ողջ ցերեկը պտտվել միջանցքում, պատերը չափչփել, ժամանակը հենց այնպես անցկացնել, քանի որ զբաղվելու ոչինչ չկար: Մինչև 1999 թ. չէր թույլատրվում շենքից դուրս գալ: Մեր նախածեռնությունը՝ մարմնամարզությամբ դրսում զբաղվելու մասին, մերժվեց »ռեժիմի« կողմից: Նրանք վախենում էին, որ երեխաները կփախչեն«:

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության ախշատակից

Հոդված 31.1. ՄԱԿ-ի երեխաների իրավունքների մասին կոնվենցիա

1. Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին ու զվարճալի միջոցառումներին և մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու և արվեստով զբաղվելու իրավունքը:

2. Մասնակից պետությունները հարգում և խրախուսում են երեխայի՝ մշակութային և ստեղծագործական կյանքին բազմակողմանիորեն մասնակցելու իրավունքը և նպաստում են մշակութային ու ստեղծագործական գործունեության, հանգստի և ժամանցի համար համապատասխան և հավասար հնարավորությունների տրամադրմանը:

• Պարտադիր աշխատանք

»Կեսօրից հետո երեխաները կարի արհեստանոցում էին: Կար նաև կոնֆետների արտադրամաս, որն անօրինական էր: Մեզ այնտեղ տանում էին աշխատելու: Աշխատում էինք երեկոյան ժամը 7-ից կամ 8-ից մինչև կեսգիշեր կամ ժամը մեկը: Ամեն օր արտադրում էինք 15-20 պարկ կոնֆետ: Իսկ հետո, գիշերվա ժամը 4-ին, մի բեռնատար էր գալիս և տանում արտադրանքը: Երբեմն մենք չէինք ուզում իջնել արտադրամաս: Այդ ժամանակ նրանք մեզ ասում էին. »Ձեզ կոնֆետ ու թխվածք կտանք«: Ամեն դեպքում աշխատելիս ժամանակ առ ժամանակ կոնֆետ էին ուտում, դրա համար էլ գնում էինք: Բայց նրանք մեզ նորմալ կոնֆետներ չէին տալիս, այլ մեքենայի խոտանած կոնֆետները«:

Վարդաշենի հաստատության նախկին սան.

Հոդված 32.1 ՄԱԿ-ի երեխաների իրավունքների մասին կոնվենցիա

Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի՝ տնտեսական շահագործումից և այնպիսի աշխատանք կատարելուց պաշտպանելու իրավունքը, որը կարող է վտանգավոր լինել կամ խոչընդոտել երեխայի կրթությանը կամ վնասել նրա առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը:

*»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան
գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞
պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով.
Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.*

Հանրապետական հատուկ հաստատություններում փաստված բոլոր շեղումներն ու բռնությունները պայմանավորված էին երեխաների տեղավորումների ոչ բավարար պատճառաբանվածությամբ, փակ բնույթի ցանկացած հաստատությունում հնարավոր շեղումների հետ, հաստատություն, որտեղ չէին գործում ներքին կանոնները, չէր իրականացվում արտաքին վերահսկողություն:

Երեխաներին կարիքներին իրապես հարմարեցված ներքին կանոնակարգի բացակայությունը անհնարին էր դարձնում հաստատության գործունեության արդյունավետությունը և նոր բռնությունների հնարավորություն էր ընձեռնում:

Աշխատակազմի դերը նվազեցվելով, իջեցվել և հասցրվել էր պահակի գործառույթի, մինչդեռ յուրաքանչյուր երեխա աջակցության և անհատական մոտեցման կարիք ուներ: Աշխատակազմի որոշ ներկայացուցիչներ չէին պատկերացնում իրենց աշխատանքը առանց կանոնավոր բռնությունների: Նրանք բռնությունների միջոցով էին ցանկանում կարգ ու կանոն հաստատել: Նրանք օգտագործում էին հատկապես տարիքով մեծ երեխաներին՝ կարգուկանոնի պատրանք ստեղծելու համար: Այն հենված էր ոչ թե ներքին կարգուկանոնի, այլ ուժի գերակշռության վրա:

Սակայն կրթահամալիրի աշխատակազմի ճնշող մեծամասնությունը դատապարտում է բռնությունը և հարգում է երեխաներին: Սենք չպետք է մոռանանք, որ նրանք նույնպես տառապել են երեխաների նկատմամբ «ռեժիմի» ներկայացուցիչների կողմից կիրառվող բռնություններից: Բռնություններ, որոնք անտանելի էին և որոնց դեմ ոչ մի միջոց չէր ձեռնարկվում:

»Ռեժիմի« տարիներին հաստատության որոշ աշխատակիցներ ռիսկի էին դիմում՝ հակադրվելով բռնություններին: Պետք է ավելի հեռուն նայել և դատապարտել ոչ թե բռնություն կիրառող անհատներին այլ արմատախիլ անել բռնություն ենթադրող ողջ համակարգը:

Շատ աղքատ երեխաներին »սոցիալապես վտանգավոր« որակելով՝ համակարգը կարող է հանգեցնել լուրջ և անընդունելի բռնությունների:

ՎԱՐՂԱՇԵՆ 2003. ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ՉԷ

2.1. Ակնհայտ առաջընթաց...

Վերը նկարագրված դաժան բռնությունները Վարդաշենի հաստատության անցյալի արձագանքներն են: 2003 թվականի Վարդաշենը ընդհանուր ոչինչ չունի 1997 թ. Վարդաշենի հետ: »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության և Հայաստանի իշխանությունների համատեղ գործողությունների արդյունքում շեղումները շտկվեցին, բարեփոխվեցին հաստատության կարգապահական նորմերը և կյանքի պայմանները: »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպությունը,

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով «Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա» թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

համագործակցելով հաստատության աշխատակազմի հետ, կարողացավ պատժիչ մոտեցումները փոխարինել դաստիարակչական մոտեցումներով, առաջարկելով կիրառել տարածայնությունների և համատեղ կյանքի կարգավորման այլ եղանակներ: Մշակվեց և հրապարակվեց ներքին կանոնակարգ: Մնում է այն կիրառել: Աստիճանաբար հաստատությունը ավելի բաց դարձնել ընտանիքների և արտաքին աշխարհի համար:

- Հաստատությունում գտնվող երեխայի բնույթի հստակեցում: Երեխայի հետ տարվող անմիջական աշխատանքը ակներև դարձրեց այն փաստը, որ երեխաների 95%-ը հաստատությունում տեղավորվել է սոցիալական կամ ընտանեկան պայմաններից ելնելով: Դրանք ոչ թե վտանգավոր երեխաներ են, այլ վտանգի մեջ գտնվող երեխաներ: Տեղավորված երեխաների բնույթի նման կարգի հստակեցումը ստիպեց նոր ձևով մոտենալ հաստատության խնդիրների սահմանմանը, հաստատությունը դարձնելով ավելի բաց և պաշտպանող:

- Սահմանվեցին մուտքի և ելքի ընթացակարգերը՝ չարդարացված տեղավորումներից խուսափելու նպատակով: Յուրաքանչյուր դեպք դառնում է դաստիարակների խմբի մուտքի և ելքի հարցերով ամեն շաբաթ հրավիրվող ժողովների քննարկման առարկա: Մուտքի գործընթացը ենթադրում է որոշակի կանոնների պահպանում (անչափահասների հարցերով հանձնաժողովի որոշման պարտադիր առկայություն, երեխայի վերաբերյալ փաստաթղթեր), ինչը հնարավորություն է տալիս խուսափել չարդարացված տեղավորումներից:

- Կրճատվեց բռնությունների ծավալը: Դրանք դադարեցին դիտվել որպես օրենք: »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպությունը կանոնավոր կերպով Կրթության նախարարությանը տեղյակ էր պահում երեխաների նկատմամբ կիրառվող բռնությունների բոլոր դեպքերի մասին: 1998 թ. սկզբին երեխաների նկատմամբ բռնություն կիրառելու համար աշխատանքից հեռացվեցին երկու հսկիչ: 1999 թ. հունիսին հեռացվեցին ևս հինգը: 2000, 2001 և 2002 թ.թ. »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության ճնշումների արդյունքում հաջորդաբար հեռացվեցին ևս երեք դաստիարակներ՝ ծանր բռնությունների մեղադրանքով:

- Վերականգնվեց երեխաների կապը ընտանիքների հետ: Երեխայի՝ հաստատություն մուտք գործելուց շատ չանցած, սոցիալական աշխատողները կազմակերպում են այցելություն ընտանիք՝ երեխայի անձնական և ընտանեկան խնդիրներին ծանոթանալու, ինչպես նաև երեխայի ընտանիք վերադառնալու հեռանկարներն ու պայմանները գնահատելու նպատակով:

- Ծավալվեցին դաստիարակչական և արտաքին աշխարհին միտված միջոցառումներ: Ամեն տարի կազմակերպվում են ամառային և ձմեռային ճամբարներ, ինչը երեխաներին հնարավորություն է տալիս կապեր ստեղծել արտաքին աշխարհի հետ, և ինչ-որ չափով թոթափել հաստատության առօրյայի բեռը: Դրսում կազմակերպվում են նաև այլ միջոցառումներ:⁴

⁴ հավելյալ տեղեկատվության համար տե՛ս »Դժվար իրավիճակում գտնվող երեխաներ« ծրագիրը – 2002 թ. գործունեության հաշվետվություն. ԲԱՍ Ֆրանսիա- առաքելություն Հայաստանում- կարելի է ստանալ կազմակերպությունում:

«Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպություն, Հայաստան գիտաժողով «Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա» թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

2.2. ... Բայց և այնպես անբավարար

Այնուամենայնիվ «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության, Վարդաշենի հաստատության աշխատակազմի և նախարարության համագործակցության արդյունքում ձեռք բերված այս զգալի առաջընթացը դեռևս չի զոհացնում, այն փխրուն է: Երեխաների առօրյան բարեփոխված է, սակայն նրանց ապագան դեռ անորոշ է հաստատության ոչ բավարար բաց լինելու, միջոցների բացակայության, սոցիալական չափազանց ծանր իրավիճակում գտնվող երեխաների նկատմամբ պետական քաղաքականության մեջ առկա որոշ անորոշության պատճառով:

- Հաստատության գործունեությունը դեռևս շարունակվում է առանց հստակ կանոնակարգման՝ երեխաների տեղավորման, մուտքի և ելքի ընթացակարգերի, յուրաքանչյուր անհատական դեպքերի վարման առումներով: Կրթության նախարարության կողմից 2003 թ. սեպտեմբերին հաստատված նոր չափորոշիչները հստակ չեն տարբերակում «վտանգի մեջ գտնվող երեխաներ» և «վտանգավոր երեխաներ» հասկացությունները: Սա ոչ հստակ, վտանգավոր, տեղավորված երեխաների իրական վիճակին և հաստատության գործունեությանը չհարմարեցված մի փաստաթուղթ է:

- 2003 թ. ընդունված նոր կանոնադրությունը հստակ չէ, պարունակում է լուրջ անճշտություններ:

- Չնայած այն բանին, որ 2003 թ. սեպտեմբերին հաստատության տնօրինությունը ավարտին հասցրեց և հրապարակեց ներքին կանոնակարգը, այն դեռևս Կրթության նախարարության կողմից հաստատված չէ, ինչն էլ կամայական մեկնաբանությունների առիթ է տալիս:

- Ընդհանրացնելով, կարող ենք ասել, որ Վարդաշենի ՀՀԿՀ-ի գործունեության մեջ իրականացված բարեփոխումները ոչ պաշտոնական բնույթ ունեն, քանի որ չեն արտացոլված Նախարարության հաստատված փաստաթղթերում: Միևնույն ժամանակ նույն կարգի մյուս հաստատությունը՝ Նուբարաշենը դեռ շարունակում է գործել բոլորովին այլ կանոններով: Երբեք փորձ չի արվել այդ տարբերությունները լուծել պաշտոնական մակարդակով:

- Օրինազանց երեխաների և «վտանգի մեջ» երեխաների ոչ հստակ տարբերակումը այսօր էլ դեռ շարունակվում է, թույլատրելի է դարձնում ամեն տիպի շեղումները: 2003 թ. հունվարին Վարդաշենում տեղավորված երեխաների միայն 5,4%-ն էր օրինախախտում կատարել: Այսինքն, երեխաների 95%-ը օրինազանցներ չէին, և հաստատությունում նրանց գտնվելու միակ պատճառը ընտանիքների ծայրահեղ աղքատությունն էր:

- Հատատությունում դեռևս չարդարացված ձևով տեղավորում են տասներկու տարեկանից ցածր երեխաների, որոնք այնտեղ վտանգված են՝ ավելի մեծ երեխաների կողմից բռնության ենթարկվելով: Այսպես, 2003 թ. հունվարի 1-ի դրությամբ, Վարդաշենի երեխաներից տասներեքը տասներկու տարեկանից ցածր էին, որոնցից երեքը՝ տասը տարեկանից: Այսօր Վարդաշենում գտնվող երեխաներից հինգը այնտեղ են հայտնվել

*«Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպություն, Հայաստան
գիտաժողով «Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞
պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա» թեմայով.
Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.*

նախքան իրենց տասը տարեկան դառնալը:⁵ մինչդեռ հաստատությունը նախատեսված է 12-ից 18 տարեկան երախաների ընդունելու համար:

- 2003 թ. հունվարի 1-ի դրությամբ Վարդաշենի ՀՀԿՀ-ում տեղավորված 93 երեխաներից 59-ը Երևանի տարածաշրջանից չէին: Այս կարգի՝ հեռավորության վրա տեղավորումները ընտանեկան կապերի համար կործանարար են: Մի քանի տարվա ընթացքում երեխան ընտանիքի հետ հազվադեպ է հանդիպում, ինչը նրա հետագա ներգրավման համար լուրջ խոչընդոտ է: Այսպես, Վարդաշենում տեղավորված երեխաների 32%-ը ծագումով Գյումրիից են և չպատճառաբանված ձևով Անչափահասների հարցերով հանձնաժողովի կողմից ուղարկվել են Երևանի հաստատություններ: Ասենք նաև, որ հիշյալ հանձնաժողովը հանիրավի առաջնությունը տալիս է հաստատություններում տեղավորելուն:

- Բռնությունների դեռևս թարմ դեպքերը և գործունեության՝ կառուցվածքային անկատարությունից բխող շեղումները կոչում են աչալրջության: Այսօր հաստատության աշխատակազմի ճնշող մեծամասնությունը հարգանքով է վերաբերվում երեխաներին, սակայն միջոցների սղությունը երբեմն պատճառ է դառնում կամայականությունների և շեղումների: Դաստիարակների քանակն անբավարար է, շատերը համապատասխան կրթություն չունեն, աշխատավարձերն էլ մնում են շատ ցածր: Այսպես, գիշերային հերթափոխը կազմված է երկու դաստիարակից՝ 40 տղա երեխայի համար և մեկ դաստիարակչուհուց՝ 40 աղջիկ երեխայի համար, մինչդեռ փաստ է, որ բռնությունների մեծ մասը կատարվում է երեկոյան: Պատահում են նաև ռեկետի և մեծերի կողմից՝ փոքրերի նկատմամբ կիրառվող ճնշումների դեպքեր: Քանի դեռ չկան միջոցներ, որոնց վրա հենվելով կարելի լինի կարգավորել տարածայնությունները, դաստիարակները խիստ մեծ դժվարությունների են հանդիպում երեխաների միջև բռնությունների կանխարգելման և խաղաղ ու հանգիստ իրավիճակ ապահովելու գործում: Նրանք հաստատության տեսակետները պաշտպանող և երեխաների առջև հեղինակություն վայելող մեկ միասնական խումբ չեն կազմում: Եթե ոմանք ջանում են մնալ իրենց բարձրության վրա, ինչը, անխոս, հարգանքի է արժանի, ապա մյուսները չեն դիմանում, պայթում են, մոռանալով, որ որպես չափահաս պարտավոր են նորմալ փոխհարաբերություններ հաստատել խմբում, ձգտում են երեխաների հետ իրենց տարածայնությունները կարգավորել անհատական ձևով, ինչը երբեմն բռնության աղբյուր է դառնում:

- նյութական և դաստիարակչական միջոցների սղությունը կասկածի տակ է դնում ձեռք բերված առաջընթացի կայունությունը: Կրթության նախարարության հատկացրած միջոցները չնչին են: Որպես օրինակ նշենք, որ «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության կողմից ֆինանսավորվում է պահպանման ծախսերի 98%-ը, հիգիենայի պարագաների ձեռք բերման ծախսերի՝ 100%-ը, բժշկական նյութերի ծախսերի 100%-ը, հաստատությունում և դրսում իրականացվող մշակութային ծախսերի 100%-ը, հագուստի ծախսերի 100%-ը, դպրոցական պիտույքների ծախսերի 100%-ը, երեխայի և ընտանիքի կապն ապահովող

⁵ Շեղումները երբեմն կատարվում են այնպիսի փոքրիկների նկատմամբ, որոնց տարիքով ավելի մեծ քույրը կամ եղբայրը արդեն հաստատությունում են: Այդպիսի փոքրիկների համար մշակվում է դաստիարակության անհատականացված ծրագիր:

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

ծախսերի 100%-ը մի հաստատությունում, որտեղ նախատեսված է իրականացնել հիմնարար և իրավիճակին համապատասխան դաստիարակություն: Ի վերջո փոխադրամիջոցի ծախսերը ևս փոխհատուցվում են ԲԱՍ-ի կողմից: Հաստատությունը, գտնվելով Երևանի ծայրամասերից մեկում, նույնիսկ փոխադրամիջոց չունի...

- Վարդաշենի հաստատությունը չի կարելի լիովին բաց համարել, իսկ պաշտպանություն կիրառվող եղանակը հարմարեցված չէ և բնավ էլ բարենպաստ չէ երեխայի ունակությունների զարգացման և հասարակության մեջ նրա հետագա ներգրավման համար: Ամենուր զգացնել է տալիս փախուստի սևեռուն գաղափարը: Ազատ և ընտրովի ժամերը, ինչպես նաև անհատական գործունեությունը և հաստատությունից դուրս երթևեկելը խիստ սահմանափակ են, ինչը երեխաներին կտրում է հասարակության իրականությունից:

- Չանտեսելով հանդերձ որոշ դասավանդողների նվիրված աշխատանքը, նշենք, որ դասավանդման որակը հազվադեպ է լրացնում աշակերտների գիտելիքների բացերը և ապահովում բավարար կրթություն: Մասնագիտական կրթության դասընթացները, որոնք հնարավորություն կտային երեխաներին տիրապետել որևէ արհեստի, դեռևս սաղմնային վիճակում են: Դեռևս շատ ջանքեր կպահանջվեն՝ երեխաների հետագա ներգրավումը հասարակության մեջ հնարավոր դարձնելու համար:

2003 թ. երբ Ե-ի Վարդաշենում գտնվելուն մնացել էր վեց ամիս, քանի որ լրացել էր նրա 16-ը, դաստիարակների խումբը որոշեց նրա համար մասնագիտական ուսուցման որևէ ճյուղ ընտրել: Տղան ուներ ծրագիր. նա ուզում էր դառնալ մետաղածուլական արտադրության բնագավառի մասնագետ: Նա շահագրգռություն էր ցուցաբերում: Սակայն նրա Վարդաշենը թողնելու պահին հաստատության աշխատախումբը դեռևս ոչինչ չէր ձեռնարկել՝ ժամանակի, միջոցների և շահագրգռության պակասի պատճառով: Հաստատությունը պաշտոնապես թողնելուց հետո Ե-ն գործնականում ոչ մի հնարավորություն չունեցավ մասնագիտական կրթություն ստանալու, չէր կարող մեռակ, առանց որևէ աջակցություն ստանալու կատարել անհրաժեշտ գործողությունները:

Հաստատության աշխատակազմը կարիք ունի հատուկ կառուցված աշխատանքային մեթոդների և բավարար նյութական ու դաստիարակական միջոցների: Անհրաժեշտ է, որ նրանց թիվն ավելի մեծ լինի, աշխատանքն առավելագույնս արժեքավորվի, որը հնարավորություն կընձեռի դաստիարակին լավագույնս իրականացնել իր առաքելությունը. այն է երեխաների պաշտպանություն, զարգացում և հասարակության մեջ նրանց վերաինտեգրացում:

3. ԻՆՉ՞ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ՆՈՒԲԱՐԱՇԵՆՈՒՄ

»Ռազմական մարզումներ, որ անվանում են «ռազմա-հայրենասիրական ուսուցում«. քայլել շարքով, ըստ կարգի կանգնել...

«Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպություն, Հայաստան գիտաժողով «Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա» թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

տևում են մեկ ժամ: Երեխաները բաժանված են երկու խմբի. փոքրերը մարզվում են ճաշից առաջ, մեծերը՝ ճաշից հետո: Այս գործողությունը կատարվում է շաբաթական 4 անգամ, իսկ կիրակի օրը մարզումները տևում են 4 ժամ: Երեխան ոչ մի թույն ազատ ժամանակ չպետք է ունենա, »նա իր ուղեղը պետք է կենտրոնացնի որևէ զբաղմունքի վրա«:

(...)
»Դաստիարակության հիմնական սկզբունքները պարզ են: Պետք է բացառել անհատականության ցանկացած դրսևորում: Երեխան այսուհետ ընդամենը մեկն է խմբից: Պարբերաբար իրականացվում է ուղեղների լվացում, ինչը հատկապես մեծ թափ է ընդունում նորեկների հանդեպ: Արտաքին միջավայրի հետ ամեն շփում արգելված է: Երեխաների անցյալը հիշեցնող ամեն ինչի, մասնավորապես ընտանիքների մասին ցանկացած հիշատակում հանդիպում է սուր հակազդեցության«:

»Մեզ թույլատրվեց այցելել միայն երկու արհեստանոց: Այնպիսի տպավորություն ստացանք, որ դրանք չեն գործում (ցուցադրված իրերը պատված էին փոշու շերտով, փայտի բուրմունքը չէր զգացվում, ատաղձագործական արհեստանոցի հատակը լրիվ մաքուր էր, պատրաստման գործընթացում գտնվող ոչ մի իր չկարողացանք տեսնել, ոչ էլ փայտի ավելորդ մի կտոր): Ամեն ինչ թվում է լավ կազմակերպված այցելումների համար: Տնօրինության կողմից ցուցադրվող իրերը իբրև թե երեխաներն են պատ-րաստել, ինչը, ըստ մեզ, քիչ հավանական է: Այցի ընթացքում և ասածները, և այցելութ-յան կարգը, ամեն ինչ հիշեցնում է շատ լավ կազմակերպված քարոզչություն«:

»Տնօրինությունը շատ է հպարտանում իր մեթոդներով. լրտեսել երեխաներին, մղել մատնությունների՝ երեխաների խոսակցություններն իրեն հասցնելու նպատակով, իսկ հաջորդ օրը երեխաներին շարք կանգնեցնել, մատնացույց անել մեղավորներին: Երեխան բոլորի աչքի առջև ծաղրի է ենթարկվում, այնուհետև՝ պատժվում«:

»Այցի ընթացքում մենք մտանք երեք դասարան և ընդամենը հինգ թույնի ընթացքում ակամատես եղանք երկու ապտակի: Տնօրենը դրանով մեզ ցուցադրեց իր իշխանությունը: Մի երրորդ երեխայի հասցրեց լացի:

Ակնհայտ է, որ ֆիզիկական բռնությունը երեխաների հանդեպ չափազանց հա-ճախակի բնույթ ունի և դաստիարակության հիմնաքարերից մեկն է: Շատ քիչ երեխա-ներ մեզ ժպտացին, նրանք սարսափահար տեսք ունեին«:

»Նուբարաշենում կիրառվում է մահակի մեթոդը. փակի տակ պահել, անվերջ բարոյախոսական խրատներ կարդալ, անհատականությունը ոչնչացնել: Իսպառ վերացված է գործելու, մտածելու ազատությունը, ընդհանրապես արգելված է արտահայտվելը:

Կիրառվում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական բնույթի բռնություններ: Հույզերի ոլորտի, զգացումների արտահայտության բոլոր հնարավորություններից զրկված են:

Երեխաները զրկված են սեփական պատմությունից: Ամեն ինչ իմացվում է, ասվում և արվում է ամեն ինչ՝ դիմադրության ցանկացած դրսևորում կտրելու համար: Սա ազատության ցանկացած դրսևորում բացառող մի համակարգի ծայրահեղ այլասերվածության ապացույցն է«:

Հատվածներ 2000թ. ապրիլին «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության աշխատակազմի՝ Նուբարաշեն կատարած այցի վերաբերյալ հաշվետվությունից:

Հոդված 28. ՄԱԿ-ի երեխաների իրավունքների մասին կոնվենցիա

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

1. Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի կրթության իրավունքը և հավասար հնարավորությունների հիման վրա այդ իրավունքների իրականացմանն աստիճանաբար հասնելու համար նրանք, մասնավորապես.

ա) մտցնում են պարտադիր և անվճար տարրական կրթություն

բ) խրախուսում են միջակարգ կրթության տարբեր ձևերի, ներառյալ՝ ընդհանուր և մասնագիտական կրթության զարգացումը, ապահովում են դրանց մատչելիությունը բոլոր երեխաների համար և ձեռնարկում են այնպիսի անհրաժեշտ միջոցներ, ինչպիսիք են՝ անվճար կրթության տրամադրումը և կարիքի դեպքում ֆինանսական օգնություն ցույց տալը, դ) ապահովում են կրթական և մասնագիտական տեղեկատվության և ուղեցույցների մատչելիությունը բոլոր երեխաների համար,

ե) միջոցներ են ձեռնարկում նպաստելու կանոնավոր դպրոց հաճախելուն և դպրոցը թողած սովորողների թվաքանակի նվազմանը:

Հոդված 29.1. ՄԱԿ-ի երեխաների իրավունքների մասին կոնվենցիա

Մասնակից պետությունները համակարծիք են, որ կրթությունը պետք է ուղված լինի երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը՝ դրանց լրիվ ծավալով (...)

Ձինված կոնֆլիկտներին երեխաների մասնակցության մասին միջազգային արձանագրության նախաբան

Պետությունները խորին անհանգստությամբ դատապարտում են (...) երեխաների ներգրավումը:

Ձինված կոնֆլիկտներին երեխաների մասնակցության մասին միջազգային արձանագրություն, հոդված 2

Մասնակից պետությունները հսկում են, որպեսզի մինչև 18 տարեկան անձինք չկոչվեն պարտադիր զինվորական ծառայության զինված ուժերում:

Իրադրությունն այսօր շատ ավելի տազնապահարույց է Նուբարաշենի հատուկ դպրոցում: Այնտեղ կատարված չէ որևէ բարեփոխում, դպրոցը ամբողջովին փակ բնույթի է և այնտեղ տեղավորված երեխաների իրավիճակը դեռևս պարուրված է անհայտության քողով: Տարիներ ի վեր »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության աշխատախմբերը իրենց ծրագրերը իրականացնելիս շփման մեջ են այդ դպրոցի նախկին սաների հետ: Վերջիններս նկարագրում են սոսկալի իրականությունը. լուրջ և պարբերական բռնություններ, ամբողջատիրական բնույթի հովանավորություն, որտեղ ոչնչացվում են երեխայի անհատականությունն ու ներանձնականը, ընտանիքների հետ կապի

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« քննարկ. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

խոչընդոտում, ռազմական տիպի հյուժիչ մարզումներ...6-ից 15 տարեկան երեխաների համար:

Այսօրվա Նուբարաշենը հուսահատեցնող ընդհանրություններ ունի «ռեժիմային» Վարդաշենի հետ:

**Հրատապ է դարձել այս հաստատության
խնդիրների, ընդունվող երեխաների կարգավիճակի և
քնույթի ճշգրտումը, ինչպես նաև այնտեղ իշխող
կարգապահական գործընթացների և կյանքի
անմարդկային պայմանների լուսաբանումը:**

**11. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՓՈՂՈՑԻ ԵՎ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՉԱՐԴԱՐԱՑՎԱԾ ՏԵՂԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ
ՓՈԽԱՐԵՆ**

»Ես չէի կարող պատկերացնել, որ իմ երեխաները ողջ օրը իմ կողքին չեն լինելու: Միգուցե կան ծնողներ, որոնց համար նշանակություն չունի՝ երեխաներն իրենց կողքի՞ն են, թե՞ ոչ: Բայց ես այդպիսին չեմ, ես շատ եմ տանջել, ինձ համար շատ դժվար էր: Եվ երեխաների համար նույնպես շատ դժվար էր: Երբ ես տեսնում էի, թե ինչպես են նրանք լաց լինում, տեսնում էի նրանց տանջանքը, ինձ համար դա անտանելի էր«:

Նուբարաշենում տեղավորված երեխայի մայր

Դժվար իրավիճակում գտնվող երեխաները պետք է հնարավորինս մնան ընտանիքում, իսկ ընտանիքը պետք է ստանա անմիջական օգնություն: Հաստատությունում տեղավորման հարցը ենթակա է քննարկման, երբ մյուս բոլոր հնարավորությունները (անմիջական օգնություն ընտանիքին, ընտանեկան միջնորդություն) արդեն սպառված են և երեխային ընտանիքում պահելն այլևս անհնար է: Տեղավորումը պաշտպանության բացառիկ միջոց է, լուծումներից ամենավերջինը: Այն պետք է նախատեսվի որոշակի ժամանակահատվածով, պաշտպանող բնույթի հաստատություններում, որտեղ առկա են երեխայի զարգացման և արտաքին աշխարհի հետ նրա հարաբերությունների ծավալման համար նպաստավոր պայմաններ:

Այսօր երեխաներին Վարդաշենի կամ Նուբարաշենի հաստատություններում տեղավորման որոշումը կայացվում է Անչափահասների հարցերով հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովներում ընդգրկված են անձինք, որոնք այս պատասխանատվությունը իրականացնելու համար համապատասխան կրթություն չունեն, բավարար չափով տեղեկացված չեն Հայաստանի հաստատությունների իրավիճակի և հոգածության այլընտրանքային հնարավորությունների մասին:

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

Տեղավորման մասին որոշումները, որոնք մի քանի տարով ասես կապանքների մեջ են առնում երեխաների ճակատագրերը, զուրկ են իրավական հիմքից, զուտ վարչական բնույթ ունեն և բավարար երաշխավորություններ չեն առաջարկում:

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության »Կանխարգելում« ծառայության փորձը ցույց է տալիս, որ շատ դեպքերում հնարավոր է նաև այսպիսի մոտեցում. ընտանիքների ծայրահեղ աղքատության պատճառով հաստատություններում տեղավորված երեխաները կարող էին մնալ իրենց ընտանիքներում, եթե վերջիններիս ցուցաբերվեր աջակցություն: Նման լուծումը նախապատվելի է երեխաների համար և քիչ ծախսատար՝ հասարակության համար:

Այսպես, 2000թ. մայիսից ի վեր, »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության աշխատախմբերը հանդիպել են փողոցներում մուրացող ավելի քան 300 երեխայի: Նրանց մեծամասնության համար դա գլխավորապես սեզոնային կամ պատահական զբաղմունք էր:

Նրանցից մոտ հարյուրը, որոնք մուրացկանությամբ զբաղվում էին կանոնավոր կերպով, ընդգրկվեց »Կանխարգելում« ծառայությունում: Այս երեխաների 90%-ը թողել է փողոցը, իսկ 1/3-ը այլևս չունի »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության օգնության կարիքը: Նրանց սոսկ փոքր մասը 2002 թ. տեղավորվեց հաստատություններում:

2002 թ. աշխատախմբերը փողոցներում հանդիպել են ընդամենը ինը նոր երեխայի: Այս նվազումը անշուշտ իրավիճակային է, քանի որ երևույթի պատճառ հանդիսացող կառուցվածքային տարրերից և ոչ մեկը Հայաստանում անցած երկու տարիների ընթացքում չի բարելավվել (պետական ծառայությունների նահանջը, հասարակական կապերի քայքայումը, ընտանիքի խոցելիության շեմի աճը, սոցիալ-տնտեսական օտարացումը):

Սակայն այդ նվազումը ակներև է դարձնում ամենաօտարված ընտանիքների հետ իրականացվող աշխատանքների իրավացիությունն ու արդյունավետությունը, որպեսզի նրանց երեխաները մի օր չհայտնվեն փողոցում կամ էլ չպատճառաբանված կերպով տեղավորվեն հաստատությունում:

Ա. ՕԳՆԵԼ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ` ՕԳՆԵԼՈՒ ԻՐԵՆՑ ԵՐԵՄԱՆԵՐԻՆ

Փոքրիկ Տ-ն մոտ տասներկու տարեկան է: Ապրում է մոր և փոքր եղբոր հետ: մայրը նպաստ չի ստանում և չի աշխատում, որովհետև փոխադրանքից և մանկապարտեզի ծախսերը գերազանցում են մինչ այդ իրեն առաջարկված աշխատավարձերը: Բնակվարձը 12 000 դրամ է: Առավոտները Տ-ն դպրոց է գնում, որտեղ նա շատ բարձր գնահատականներ է ստանում: Երեկոները նա մուրացկանությամբ է զբաղվում մեկ կամ երկու ժամ՝ տուն ինչ-որ բան տանելու համար: Տանը նա ստանում է իր

*»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան
գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞
պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով.
Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.*

**զարգացման համար անհրաժեշտ մայրական սեր: Տեղավորել նրան
հաստատությունում, թե՞ թողնել տանը:**

Երբ »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության
»Կանխարգելում« ծառայությունը դժվար իրավիճակում գտնվող
ընտանիքներին կայուն և իրագործելի այլընտրանք է առաջարկում,
ընտանիքները գրեթե միշտ ընդունում են այդ առաջարկը և դադարում են
երեխաներին փողոց ուղարկել:

1. ԶԱՐԳԱՑՆԵԼ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

2002 թ. 11 երեխա թողեցին Վարդաշենի ՀՀԿՀ-ն և վերադարձան
Գյումրի: Նրանցից ինը տարեկան մի աղջնակ և երեք ծնողազուրկ
երեխաներ, որոնք չպատճառաբանված ձևով էին տեղավորվել ՀՀԿՀ-ում,
վերցվեցին իրենց հարազատ քաղաքի մանկատների խնամքի տակ:

Գյումրիում, ինչպես նաև Հայաստանի ցանկացած
տարածաշրջանում, գործում են տեղական կառույցներ (գիշերօթիկ
դպրոցներ, կամ ուղղակի օգնություն, ինչը հնարավոր է դարձնում
ընդունել երեխաներին և պահպանել նրանց կապը ընտանիքների հետ:
Սակայն դրանց թիվը դեռևս անբավարար է: Անհրաժեշտ է զարգացնել
տեղական կառույցները, հնարավորություն տալով անչափահասների
հարցերով հանձնաժողովներին իրականացնելու իրենց
առաքելությունը: Ի դեպ, նրանց մի մասն արդեն պարբերական
տեղավորումների կողմնակից չէ և ձգտում է կանխարգելիչ
գործնելությանը զարկ տալ:

Ըստ բնակության վայրի բաց կենտրոնների ստեղծումը, որտեղ
երեխան և ընտանիքը հնարավորություն կունենա ստանալ
սոցիալական, բժշկական, հոգեբանական օգնություն, իրավաբանական
և կրթական օժանդակություն, այս գործընթացի մասը կարող են կազմել:
Սոցիալական ապահովության նախարարությունը մտադիր է մոտ
ապագայում բացել այս կարգի երկու կենտրոն. մեկը՝ Գյումրիում, մյուսը՝
Երևանի թաղամասերից մեկում: Այս նախաձեռնությունը ողջունելի է և
արժանի աջակցության:

2. ՊԱՐԶԵՑՆԵԼ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

»Կանխարգելում« ծառայությունում գրանցված ընտանիքների 20%-ը
գրանցում չունի:

2002թ. վերջին »Բժիշկներ առանց սահմանների«
կազմակերպությունը, մոտ 15 այլ կազմակերպությունների հետ համատեղ,
որոնց թվում Սախարովի անվան հիմնադրամը և հասարակությունից
օտարվածների հետ աշխատող այլ հասարակական
կազմակերպություններ, նամակ են հղել հանրապետության վարչապետին՝
տազնապահարույց իրավիճակի վրա նրա ուշադրությունը հրավիրելու

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

նպատակով, միաժամանակ առաջարկելով, որպեսզի խնդրո առարկա ընտանիքներին հնարավորություն տրվի գրանցվել ուղղակիորեն թաղապետարաններում կամ այլ կազմակերպություններում, ինչպես դա արվում է Եվրոպայի մի շարք երկրներում:

[...] Վերոհիշյալ ընտանիքները արդեն իսկ բախվել են լուրջ սոցիալ-տնտեսական դժվարությունների: Հնարավորություն չունենալով ձեռք բերել ինքնությունը հաստատող փաստաթղթեր, ընտանիքների վիճակը ավելի ու ավելի է վատթարանում, ինչը նրանց թույլ չի տալիս ձերբազատվել օտարվածության իրենց պարտադրված վիճակից:

Ահա թե ինչու, շահագրգիռ կազմակերպությունների հետ համատեղ, մենք խնդրում ենք ձեռք առնել համապատասխան միջոցներ, որոնցում հաշվի կառնվի հայաստանյան այս նոր իրողությունը:

-Նշված հիմնահարցը իրավական և սոցիալական պատշաճ մակարդակով լուծելու նպատակով՝ այս կարգի ընտանիքներին գրանցման հնարավորություն ընձեռում ներքին գործերի համապատասխան մարմիններում, թաղապետարաններում կամ շահագրգիռ նախարարությունների կողմից ստեղծված մարդասիրական կազմակերպություններում:

- Օրենսդրական դաշտի համապատասխան փոփոխություն՝ հետազայում նման իրավիճակի կրկնությունը բացառելու նպատակով: [...]

Հատված 2002 թ. դեկտեմբերին վեց կազմակերպությունների՝ այդ թվում «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության վարչապետին ուղարկված նամակից⁶:

Այսօրվա դրությամբ, Ներքին գործերի նախարարությունը առաջարկել է նամակում նշված 19 դեպքերի քննությունն իրականացնել և հնարավորինս կարգավորել: Սակայն սա չի կարող հարցի լուծում դառնալ քաղաքացիության իրենց ատրիբուտներից և սոցիալական իրավունքներից զրկված հազարավոր հայ ընտանիքների համար:

3. ՀԱՐՄԱՐԵՑՆԵԼ ԵՎ ԶԳԱԼԻ ՉԱՓՈՎ ԱՎԵԼԱՑՆԵԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԼՊԱՍՏՆԵՐԸ

»Կանխարգելում« ծառայություն ընդգրկված ընտանիքների 55%-ը ոչ մի տեսակի նպաստ չի ստանում, մինչդեռ բոլորին պետք է նպաստ հատկացվեր, ելնելով նրանց վիճակից: 1990 - ական թվականներին ստեղծված ընտանեկան նպաստների »Փարոս« համակարգը, որից այսօր օգտվում է Հայաստանի բնակչության մոտ 1/3-ը, չի բավարարում խիստ

⁶ Համալսարանական կանանց ընկերություն, Հայ սոցիոլոգների ընկերություն, Ապագա սերունդ միություն, կանանց իրավունքների կենտրոն, մարդու իրավունքների պաշտպանության Սախարովի անվան հիմնադրամ:

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

կարիքի մեջ գտնվող անձանց պահանջմունքները: Այն պետք է վերաճևավորվի հետևյալ նպատակներով.

- Մատչելի դարձնել նպատները՝ պարզեցնելով ընդգրկման համար անհրաժեշտ գործողություններն ու չափանիշները: Ըստ բնակության վայրի սոցիալական կենտրոնների ստեղծումը, թաղապետարաններում կամ որոշ ընկերություններում գրանցվելու հնարավորությունը այս գործընթացի բաղկացուցիչներից են:

- Ավելացնել նպաստների ծավալը. երեք անձից բաղկացած ընտանիքին հատկացվող նպաստը չի գերազանցում 10 հազար դրամը, ինչը խիստ անբավարար է;

- Հատուկ նպաստներ սահմանել բազմազավակ միայնակ մայրերի համար: Հաստատությունում տեղավորված երկու երեխայի համար պետությունը ամսական ծախսում է 100 հազար դրամ, և այդ գումարը չի բավարարում նրանց պահանջներին այս իրավիճակում: Մինչդեռ, եթե պետությունը նրանց մայրերին հատկացներ ամսական 30 հազար դրամ, որը կլրացվեր որոշ պատահական վաստակով, ապա մայրը հնարավորություն կունենար հոգալ իր ընտանիքի կարիքները:

- Խիստ աղքատ ընտանիքների երեխաներին մանկապարտեզի վարձից ազատումը հնարավորություն կտար նախադպրոցական կրթության համակարգում ընդգրկել բազմաթիվ երեխաների և նրանց մայրերին ազատ ժամանակ տրամադրել՝ աշխատելու համար:

Բ. ՊԱՇՏՊԱՆՈՂ, ՂԱՍԻԱՐԱԿՈՂ ԵՎ ԲԱՑ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՎԵՐԱՆԱՅԵԼ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

2002 թ. ընթացքում »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպությունը իր »Կանխարգելում« ծառայությունում ընդգրկված երեք հարյուր երեխաներից միայն հինգի առումով է տեղավորման հարց բարձրացրել: Պահպանվել է այդ երեխաների կապը ընտանիքների հետ, քանի որ այս տեղավորումների վերջնական նպատակը երեխաների վերադարձն է ընտանիքի գիրկը:

Հրատապ են տեղավորման քաղաքականության մշակումը և այլընտրանքային լուծումների ծավալումը, Անչափահասների հարցերով հանձնաժողովի կողմից իրականացվող տեղավորման չափանիշների համակարգի բարեփոխումը և ռացիոնալացումը:

- Ընտանիքի հետ կապերի պահպանման նպատակով, երեխաները հնարավորության սահմաններում պետք է տեղավորվեն բնակության վայրում կամ տարածաշրջանում գտնվող հաստատությունում:

- Տարբեր տարիքի և տարբեր բնույթի դժվարություններ ունեցող երեխաների միատեղումը վտանգավոր է: Յուրաքանչյուր երեխա պետք է տեղավորվի այնպիսի հաստատությունում, որն ի վիճակի է աջակցել նրան՝ սեփական խնդիրները լուծելու գործում:

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

Անհրաժեշտ է վերանշակել և կիրառել տարբեր բնույթի հաստատություններում երեխաների մուտքի և ելքի պայմանները, ինչպես նաև պետք է նախատեսել երեխաների վիճակի կանոնավոր վերանայումներ: Ցավոք սրտի իշխանությունների՝ այս բնագավառում որոշակի առաջընթացը վերը նշված խնդիրները դեռևս չի ներառել:

Այսպես, 2003 թ, սկզբին Վարդաշենի ՀՀԿՀ-ի նոր կանոնադրության և ներքին կանոնակարգի մշակման ժամանակ »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպությունը ափսոսանքով ընդունեց այն փաստը, որ Կրթության նախարարությունը այդ հաստատությունում տեղավորված երեխաներին դեռևս առաջարկում է որակել որպես »սոցիալապես վտանգավոր«, շարունակելով նույնացնել վտանգի մեջ գտնվող երեխաներին վտանգավոր երեխաների հետ և համարելով, որ նրանց պետք է փակել հաստատություններում: Այս անվանումը, որը »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության ճնշման տակ դադարել էր գործածվել, կրկին սկսեց օգտագործվել 2003 թ. սեպտեմբերին, երբ կրթության նախարարությունը սկսեց մշակել երեխաների մուտքի և ելքի նոր կանոնները: Այս փաստաթղթերում դեռևս հստակ չեն սահմանված »վտանգի մեջ« երեխաներ և »վտանգավոր երեխաներ« հասկացությունները, ինչը հնարավոր է դարձնում անցյալում արդեն արձանագրված շեղումները և, որպես հետևանք՝ վերադարձ դեպի փակ հաստատություն:

2. ՓԱԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՒՍԱՐԻՆԵԼ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՎ

Անժխտելի փաստ է, որ որոշ երեխաներ իրենց ընտանիքներում վտանգի մեջ են և պաշտպանության կարիք ունեն: Հաստատությունների գոյությունն, այսպիսով, անհրաժեշտություն է, որտեղ երեխաները պատսպարված կլինեն վտանգից, կստանան անհրաժեշտ հովանավորություն և դաստիարակություն, միաժամանակ չանջրպետելով այդ երեխաներին հասարակությունից:

- Փակ հաստատությունները պետք է վերափոխել և դարձնել ընտանիքների սոցիալական անկայունության հետևանքով վտանգի ենթակա երեխաների համար նախատեսված երեխաների ընդունման կենտրոններով, որոնք անջրպետված չեն լինի արտաքին աշխարհից: Այս նոր տիպի հաստատությունները պետք է լինեն Սոցիալական ապահովության նախարարության ենթակայության տակ: Անվան փոփոխությունը հնարավորություն կտա վերջ դնել այժմ գործող հաստատություններում տեղավորված երեխաների խարանված լինելու մտայնությանը:

- Նոր կանոնները, հնարավոր դարձնելով երեխայի համակողմանի զարգացումը, յուրաքանչյուր հաստատությունում հնարավորություն կնձեռեն երեխայի դաստիարակության և հասարակության մեջ նրա հետագա վերաինտեգրման համար: Կանոնների կատարման վերահսկողությունը պետք է իրականացնի խնամակալ նախարարությունը: Իրավական անհրաժեշտ փաստաթղթերով ապահովվածությունը թույլ կտա

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

կազմակերպել համատեղ կյանքը և աշխատախմբերի աշխատանքը, սահմանել չափահասների և երեխաների իրավունքներն ու պարտականությունները, կարգավորել կոնֆլիկտները և այդ եղանակով կանխարգելել ապագործունեությունը և բռնությունները:

- Բռնություն կիրառողները պետք է պարբերաբար պատժվեն, իսկ երեխաներին, ինչպես և դաստիարակներին, պետք է մշտապես ներշնչել այն գաղափարը, որ բռնությունը ոչ մի դեպքում օրինական չէ: Դաստիարակները լուրջ բռնության դեպքերի մասին պետք է մշտապես տեղյակ պահեն խնամակալությունն իրականացնող նախարարությանը: Բռնությունը պետք է դադարի արգելված թեմա համարվելուց:

- Պետք է ավելացնել հաստատության աշխատակիցների թվաքանակը, բարձրացնել աշխատավարձերը, ավելի բազմազան դարձնել նրանց վերապատրաստումը, հատկացնել ավելի շատ նյութական և դաստիարակչական միջոցներ:

- Շրջանների երեխաները այլևս չպետք է տեղավորվեն Երևանի հաստատություններում: Այդպիսի աշխարհագրական տարաբաժանումը կործանարար է ընտանեկան կապերի համար:

- Երեխաների ընդունման կենտրոնները չպետք է անջրպետված լինեն արտաքին աշխարհից՝ երեխաների ապագայի նախապատրաստման նպատակով: Գործնական այս քայլերը հնարավորություն կտան բարելավել իրավիճակը:

- Նախատեսել ընտանիքների հետ հանդիպումները հնարավոր դարձնող բյուջե:

- Թույլ տալ արտաքին տարածքի ազատ օգտագործում:

- Ավելացնել թաղամասում անհատական և խմբերով զբոսանքների թիվը:

- Երեխաներին ուղարկել թաղամասի դպրոց՝ ուսանելու: Սա հնարավորություն կտա ապահովել գիտելիքների անհրաժեշտ մակարդակ:

- Արդյունավետ կերպով զարգացնել մասնագիտական ուսուցումը հաստատությունից դուրս 16 տարեկանից սկսած. 14 տարին լրացածների համար կազմակերպել մասնագիտական գործունեության հետ ծանոթացում՝ բոլոր ցանկացողների համար:

Այս բարեփոխումները իրականություն կդառնան այն պայմանով, եթե հաստատության երեխաների թիվը չզերազանցի 80-ը, իսկ հաստատությանը հատկացվի համապատասխան բյուջե:

3. ՄԵՂՄԱՑՆԵԼ ՕՐԻՆԱԽԱԽՏ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՏԻՃՆԵՐԸ

Հայաստանում բոլորը պետք է օրենքի առջև հավասար պատասխանատվություն ունենան: Մանկահասակ օրինախախտները պետք է դատվեն դատական ատյանում:

- Երեխաների վերաինտեգրացման միտված իրավական բնույթի միջոցառումներից դրվատանքի են արժանի այնպիսիք, որոնք առավելագույնս բացառում են կալանավորումը: Այսպես, անօգուտ է փոքր զանցանքներ կատարած երեխաներին տեղավորել հաստատություններում, ընտանիքից անջատելով: Ընդհակառակը, նրանց նկատմամբ պետք է

»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞ պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով. Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.

կիրառել համապատասխան իրավական վերահսկողություն (Ոստիկանության համայնքային բաժանմունք) համակցված կամավոր, ընտրովի միջոցների հետ՝ երեխաների սոցիալական ներգրավումը ավելի դյուրին դարձնելու համար (մասնագիտական կրթություն, վերադարձ դպրոց, հոգեբանական աջակցություն):

• Այն դեպքերում, երբ կալանավորումն անխուսափելի է, այն պետք է իրականացվի Արդարադատության նախարարության ենթակայության տակ գտնվող հիմնարկում կիրառվելով իրավախախտումների համար՝ օրենսգրքով նախատեսված պատժամիջոցների կարգը: Գոյություն ունեն հատուկ կառույցներ, ինչպես, օրինակ, Աբովյանի ուղղիչ-աշխատանքային գաղութը, որտեղ անչափահասները կրում են իրենց պատիժը՝ մարդու արժանապատվությունը չոտնահարող պայմաններում, միաժամանակ նաև ստանալով դաստիարակություն: Այսպես, 2002 թ. Վարդաշենի ՀՀԿՀ-ում տեղավորված չորս օրինազանց երեխաներից երեքը իրենց պատիժը կրելու համար տեղափոխվեցին Աբովյանի անչափահասների համար նախատեսված ուղղիչ-աշխատանքային գաղութ:

5. ՎԵՐԱՍԱՀՄԱՆԵԼ ՄՅՈՒՄ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ

Խոշոր հաստատությունները, որոնք կարող են ապաստանել հարյուրից երկու հարյուր երեխաներ, ծախսատար են և հարմարեցված չեն երեխաների բնականոն զարգացման համար: Ապագայի համար նախապատվությունը պետք է տրվի ընտանեկան տիպի փոքրիկ կառույցներին՝ նախատեսված տասից քսան երեխայի համար: Երկարաժամկետ կտրվածքով, նրանք ավելի թանկ չեն նստի, իսկ ստացվելիք արդյունքները կգերազանցեն խոշոր հաստատությունների արդյունքները:

Հաստատությունների աշխատակիցների և դրանցից յուրաքանչյուրում տեղավորված երեխաների թվի նվազումը կհանգեցնի դաստիարակչական նպատակներով նախատեսված միջոցների նոր վերաբաշխման՝ հօգուտ գոյատևող կառույցների:

ՈՐՊԵՍ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի դժվար իրավիճակում գտնվող երեխաների հետ իրականացրած վեցամյա աշխատանքներից հետո »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպությունը բավարար ապացույցներ է ներկայացրել՝ այն առումով, որ մոտեցումներից լավագույնը՝ երեխաներին օգնելն է օտարումից, փողոցից և օրինախախտումներից խուսափելու նպատակով: Տեղավորումը հաստատություններում պետք է կիրառել բացառիկ դեպքերում, այն պետք է լինի վերջին ծայրահեղ միջոցը, երբ մյուս բոլորը մատնվել են անհաջողության:

Անհրաժեշտ է իրականացնել հաստատությունների համակարգի հանընհանուր բարեփոխման և գործունեության բարելավման խնդիրը:

*»Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպություն, Հայաստան
գիտաժողով »Դժվար իրավիճակում գտնվող երեխաները Հայաստանում. Ինչպիսի՞
պաշտպանություն: Ինչպիսի՞ ապագա« թեմայով.
Երևան, սեպտեմբերի 25-ը, 2003թ.*

Այսպես, չնայած անժխտելի առաջընթացին, Վարդաշենի ԶՅԿ-ն դեռևս չի կարելի բաց համարել, այն հնարավորություն չի ընձեռում երեխաների՝ հասարակության մեջ վերաինտեգրման համար: Ինչ վերաբերում է Նուբարաշենի հատուկ դպրոցին, որը լիովին փակ հաստատություն է, ապա այնտեղ երեխաներին պարտադրված կյանքի պայմանները խիստ անհանգստացնող են: Հրատապ է իրավիճակի գնահատման և համապատասխան բարեփոխումների իրականացումը:

Հասարակական կազմակերպությունների, մասնավորապես »Բժիշկներ առանց սահմանների« կազմակերպության ներկայությունը Հայաստանում ժամանակավոր է, կգա մի օր, երբ հայերը, քաղաքացիական հասարակությունը և իշխանությունները ստիպված են լինելու իրենց հոգածության տակ վերցնել սոցիալական խիստ անկայուն իրավիճակում գտնվող երեխաներին: Նրանք ստիպված կլինեն ընտրություն կատարել. շարունակել կիրառել հոգածության տակ վերցնելու փակ, պատժիչ, երեխային իր միջավայրից կտրող քաղաքականությունը, թե՞, ընդհակառակը՝ նախապատվությունը տալ բաց, դաստիարակչական գործընթացներին, օգնելով երեխաներին մնալ իրենց ընտանիքներում:

Վերջիվերջո նրանք պետք է որոշեն՝ շարունակել աղքատ երեխային դիտարկել որպես հավանական հանցագործ, թե ընդհակառակը, նրան համարել զոհ, որը կարիք ունի չափահասների և հասարակության աջակցությանը՝ իրավահավասար քաղաքացի դառնալու համար: